№ 162 ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒԼԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒԼԻՍԻ № 162

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն՝ լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

Ամսիս 17-ին լրացաւ հռչակաւոր հրապարակախօս և յայտնի հասարակական գործիչ

ԳՐԻԳՈՐ ԱՒԵՏԵԱՆ ՋԱՆՇԵԱՆԻ

մահվան 10-ամեակը, որի առիթով մի խումբ համակրողների նախաձեռնութեամբ կիրակի, ամսիս 25-ին, ժամը 12 ին, հանգուցեալի յիշատակին Վանքի մայր-եկեղեցում ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ կը կատարվի:

(հ.շ.կ.) 856. 3—3

Յուլիսի 22-ին կարճատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Թիֆլիսի Նահանգական դատարանի անդամ

Սմբատ Պաւլովիչ ԼԱԶԱՐԵԱՆԸ,

որի մասին խորին վշտով յայտնում է ազգականներին, պաշտօնակիցներին և ծանօթներին հանգուցեալի կինը՝ Մարիամ Լազարեանը իր զաւակներով: Ամբիծքն ամեն օր, երեկոյեան ժամը $7^1/_2$-ին հանգուցեալի բնակարանում (Սերգիեվսկայա փողոց № 5): Մարմնի յուղարկաւորութիւնը երեքշաբթի, յուլիսի 27-ին, առաւօտ. ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Վերայի գերեզմանատանը: 866. 1—1

Երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ յուլիսի 21-ին վախճանվեց

Արտեմ Սերգէևիչ ԵՂԻԲԷԳԵԱՆԸ,

որի մասին հոգեկան դառն վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի մայրը՝ Մարիամ Դաւթեան և կինը՝ Եկատերինա Արսէնեան ԵՂԻԲԷԳԵԱՆՆԵՐԸ: Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, յուլիսի 25-ին. առ. ժամը 10 ին, հանգուցեալի բնակարանից (Կիրօչնայա փող. № 15) դէպի Թանդոյեան եկեղեցին: Թաղումը Վերայի գերեզմանատանը: 858. 2—2

Առաջիկայ $19^{10}/_{11}$ ուսումնական տարում

Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցում

նորեկների ընդունելութեան համար ազատ տեղեր կան երրորդ, վեցերորդ և եօթներորդ դասարաններում:

Խնդիրները (ծննդեան վկայականների հետ միասին) ընդունվում են մինչև օգոստոսի 21-ը և մտնել ցանկացողները պէտք է քննութեան ներկայանան օգոստոսի 27-ին:

Տեսուչ՝ Ստ. Մալխասեանց

(2, 25, օգ. 10) առ. 795. 3—2

Ալէքսանդրոպոլի Առեւտրակ. Դպրոցի Վերատեսուչը

սրանով յայտարարում է, որ Առևտրի և Արդիւնաբեր. Մինիստրութեան Ուսումնական Բաժանմունքի Թոյլտուութեամբ Ալէքսանդրոպոլի Առևտրական Դպրոցը օգոստոսի 1-ից 1910 թ. եօթ-դասեան տիպից վերածվում է ութ-դասեանի—6 հիմնական և 2 մասնագիտական դասարաններով: Ծրագիրները համապատասխանում են Թիֆլիսի Առևտր. Դպրոցի ծրագիրներին: Ստորին պատրաստական դասարանն ընդունվում են 7—9 տարեկան երեխաներ առանց քննութեան: Դպրոցի լրիւ դասընթացքն աւարտող աշակերտները ստանում են ատեստատ և արժանանում են անձնական պատւաւոր քաղաքացի կոչման: Գերազանց աւարտողներն արժանանում են կոմմերցիայի կանդիդատի կոչման, որոնք՝ ծառայելով 10 տարի առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւններում, ստանում են առանձին վկայագիր, որն իրաւունք է տալիս մտնելու պետական ծառայութեան առաջին կարգի աստիճանով (Полож. о коммерч. учил. 1906 г. ст. 52 и изм. полож. 1900 г. ст. 51): Զինուորական ծառայութեան և պետական պաշտօն ստանձնելու, նոյնպէս և բարձրագոյն դպրոցներ մտնելու վերաբերմամբ, Առևտրական դպրոցներն աւարտողները օգտվում են այն իրաւունքներով, որպիսիք տրվում են րէալական դպրոցներն աւարտողներին:

Դպրոցին կից կայ լաւ սարքաւորված քիմիական լաբօրատորիա:

Ուսման վճարը. պատրաստական դասարանների համար՝ 80 ր., I—IV դասարանների համար՝ 100 ր., V—VIII դասարանների համար՝ 120 ր.:

Խնդիրքների ընդունելութիւնը Դպրոցի գրասենեակում ամեն օր՝ առ. ժամը 10-ից մինչև ցեր. ժամը 2-ը:

Քննութիւնների սկիզբը օգոստոսի 20-ին:

(առ.) (27, 11, 25) 777. 3—3

ԱՃՈՒՐԴ ԵՐԵՒԱՆՈՒՄ

„Երեւանեան Ջրանցք" Ընկերութեան Խորհուրդը օգոստոսի 3-ին սոյն թւի նշանակել է **ԱՃՈՒՐԴ Երեւանում**, Առևտրական Տան Ա. և Տ. Աֆրիկեանների գրասենեակում, հողային և սալայատակելու աշխատանքների (мостов. работ.), ըստ նախահաշուի 13,622 ր. 27 կ. գումարի:

Գրաւական պահանջվում է՝ կանխիկ կամ տոկոսաբեր թղթերով—10%, երաշխաւորութեամբ—25%:

Տեխնիկական թղթերի և հաշիւների հետ կարելի է ծանօթանալ յիշեալ գրասենեակում:

Փակ ծրարները կընդունվեն նոյն գրասենեակում մինչև օգոստոսի 3-ի ցերեկվայ ժամը 12-ը:

(20, 25, 28, 30) առ. 850. 4—2

ԱՃՈՒՐԴ ԵՐԵՒԱՆՈՒՄ

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ և ԿՈՄ." ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի „ՍԻՄԷՆՍ եւ ՖԱԼՍԿԷ" ռուսական էլեքտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բեռլինի „ՍԻՄԷՆՍ եւ ՖԱԼՍԿԷ" ակց. ընկ., Բեռլինի „ՍԻՄԷՆՍ ՇՈՒԿԷՐՏ-ՎԷՐԿԷ" ակց. ընկ., Կոլոմէնի մեքենագործական ընկ. եւ եղբ. „ԿՐՕՍԼԷՅ" անգլիական գործարանի ներկայացուցիչներ:

ՉԱՓՍԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	ՀՈՍԱՆՔԱՉԱՓ, ամպերմէտրներ, վօլտմէտրներ և ամեն տեսակ հաշւեցոյց ապարատներ փոփոխվող և մշտական հոսանքի համար:
ԷԼԵՔՏՐՕ-ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	„ՌԷՆՏԳԷՆԻ" ապարատներ բոլոր պատկանելիքներով: Միւսորող ապարատներ՝ ԿԱՈՒՍՏԻԿԻ, ԳԱԼՎԱՆԻԶԱՑԻԱՅԻ, ԷԼԵՔՏՐՕԼԻԶԻՑԻ, ֆարադիզացիայի համար, եւ այլն:
ԱՎՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Ավտոմօբիլներ «ՊՐՕՏՕՍ», էլեքտրաշարժ և բենզինաշարժ: „Մօտօրնի մակոյկներ": Ավտոմօբիլային պատկանելիքներ:
ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Ջերմային շարժիչներ „ԴԻԶԷԼԻ"—հում նաւթի, մազութի համար և այլն, միանգամայն ձեռնտու: Գազային շարժիչներ «ԳԻՒԼԴՆԷՐԻ»: Նաւթային, կէրօսինային, գազային շարժիչներ „ԿՐՕՍԼԷՅԻ":

ՊԱՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլեքտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեքտրական կառուցուածքների համար և այլն:

ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման:

Տելեֆօն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.

№ 2. (կ.) (առ.) 433. 26—8

Թիֆլիսի Ժողովարան

ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՇԱԲԱԹ

✦ տեղի կունենայ ✦

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՉՈՐՍ ԵՐԵԿՈՅԹ

Երեքշաբթի օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԳ ԽՈՒՄԲ, ՍԱԶԱՆԴԱՐ, ՊԱՐԵՐ:

Հինգշաբթի և շաբաթ օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԳ ԽՈՒՄԲ:

Կիրակի օրերը՝ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ և ՍԱԶԱՆԴԱՐ:

Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ռուբ., կանայք 50 կ.:

ԱԶԴ.—Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ երեկ. ժամը 6—8-ը՝ երեխաների համար—ՊԱՐԵՐ:

(կ.) առ. 729. 0—7

ԳԵՂՈՆԻ

«Մշակի» խմբագրութեան տրամադրութեան տակ կան սակաւաթիւ օրինակներ: Ուստի նրանք, որոնք ցանկանում են ունենալ իրանց սեղանի վրա այդ գեղեցիկ հրատարակութիւնը և միևնոյն ժամանակ օգնութիւն հասցրած լինել Ադանայի ջարդի միջոցին որբացած հայ մանուկներին, թող շտապեն դիմել «Մշակի» խմբագրութեան:

Գինն է Թիֆլիսում՝ 4 ր., Թիֆլիսից դուրս՝ ճանապարհածախսով՝ 4 ր. 50 կ.:

(օ.մ.) առ. 830. 5—5

ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԵԹԻ թեմի հայոց եկեղեցական ծխական դպրոցների համար հրաւիրվում է

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ

բարձրագոյն կրթութեամբ և մանկավարժական փորձառութեամբ: Ռոճիկը 3000 ր.: Պայմանների հետ ծանօթանալ առաջնորդարանում: Խնդիրներն ընդունվում են մինչև օգոստոսի 15-ը:

(շ. կ.) առ. 857. 2—2

Գ. ՋԱՆՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Այսօր Թիֆլիսում կը կատարվի հանգուցեալ հրապարակախօս Գրիգոր Ջանշեանի հոգեհանգիստը նրա մահվան տասնամեայ տարեդարձի առիթով:

Հանգուցեալի յիշատակը այսօր էլ թանգ է, ինչպէս և տասն տարի առաջ: Այն համակրելի, լուսաւոր և մարդասէր գործունէութիւնը, որով նա հանդէս եկաւ ռուս և հայ հասարակութեան առաջ, դարձրել են նրա անունը սիրելի և կապել են այդ անունը անմոռաց գաղափարների հետ:

Արդարև, ո՞վ կարող է խօսել վաթսունական թւականների բարենորոգումների մասին և չը յիշել այդ բարենորոգումների ջերմ և տաղանդաւոր ջատագով Ջանշեանի անունը: Ո՞վ կարող է վերյիշել հայկական հարցի և հայկական արհաւիրքների սրտակտոր պատմութիւնը և չը յիշատակել Ջանշեանին, որ հանդէս եկաւ իբրև պաշտպան տառապեալ ժողովրդի և իբրև նախաձեռնող օգնութեան գործի՝ որբերի օգտին:

Ջանշեանը պատկանում էր այն հասարակական գործողների շարքին, որոնք հաւատում էին վաթսունական թւականների գաղափարների յաղթանակին և, ոգևորված այդ յաղթանակի հեռանկարով, ներշնչում էին ոգևորութիւն և շրջապատողներին, գրաւելով բոլորի ուշադրութիւնը դէպի այն վեհ առաքելութիւնը, որ վաթսունական թւերի գործողները ստանձնել էին և յետոյ աւանդել իրանց յետնորդներին, իբրև սրբազան մի կտակ և պատմական-հասարակական մի պարտաւորութիւն:

Ջանշեանը թէ իբրև իրական մշակ այն բարենորոգչական գործում, որ աւանդել էին վաթսունական թւականները, և թէ իբրև ջերմեռանդ քարոզիչ ու ազդու կոչնակ սրբազան գաղափարների՝ հանդիսացաւ իբրև առաջնակարգ պատգամախօս այն օրերում, երբ չափազանց մեծ կարիք կար հեղինակաւոր և թարմացնող խօսքի, քաջալերող և ոգևորիչ յորդորների:

Ջանշեանի մէջ ընդհանուր քաղաքացիական գործողը սերտ և անբաժան կերպով կապված էր իր հայրենիքի տենչանքներով տոգորված գործողի հետ: Նա ընդհանուր քաղաքացի էր և միևնոյն ժամանակ իր ազգի մտերիմ զաւակը:

Եւ երբ հարազատ ժողովրդի տանջանքի մորմոքները հասան նրա ականջին և սրտին, նա մի անսովոր յափշտակութեամբ նետեց իրան դէպի իր հայրենի ժողովրդի շահերի պաշտպանութեան ասպարէզը, սրտագին կոչ արձակեց ի պաշտպանութիւն տառապեալների և հրաւիրեց լուսաւոր աշխարհի հասարակական կարծիքի ուշադրութիւնը դէպի թշուառութեան վայրերը և զոհերը:

Եւ այսօր, անմոռաց մեր հայրենակցի մահվան տասնամեայ տարեդարձի կատարման օրը, մենք երախտագիտութեամբ յիշում ենք նշանաւոր քաղաքացու և հայրենասէրի համակրելի և գրաւիչ անձնաւորութիւնը, որը կը մնայ անմոռաց շատ սերունդների համար իր բարոյական վեհութեամբ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 23 յուլիսի

Կայսրն ընդունեց բրիտանական դեսպան Նիկօլսոնին, որի պատւին յետոյ նախաճաշ եղաւ Բարձրագոյն ներկայութեամբ: (Հ. Գ.)

Խարբին, 23 յուլիսի

1881 թւի ռուս-չինական պայմանագիրը վերաքննելու առիթով Մուկդէնի գեներալ-նահանգապետը, Պեկինից ստացած կարգադրութեան համաձայն, պատուիրագրեց Իլունցզինի, Գիրինի և Մուկդէնի նահանգների դատաւորներին՝ ձեռնարկել ժողովելու նիւթեր նոր պայմանագրի հիմունքների լուսաբանութեան համար Մանջուրիայի շահերի տեսակէտից: (Հ. Գ.)

Ստոկհոլմ, 23 յուլիսի

Զինաթափութեան հարցի վերաբերութեամբ խաղաղութեան կոնգրէսը մի բանաձև ընդունեց, որով ցանկութիւն է յայտնվում, որպէսզի Եւրոպայի խաղաղութեան ընկերութիւնները գալիք տարի դիմեն իրանց կառավարութիւններին, պահանջելով միջազգային պաշտօնական յանձնաժողով հաստատել՝ դեռ մինչև երրորդ Հաագայի կոնֆերենցիան՝ սպառազինումը սահմանափակելու հարցի քննութեան համար: (Հ. Գ.)

Մադրիդ, 23 յուլիսի

Պատգամաւոր Ֆէլիուն բուրբոնեան Հայմէի անունից կոչ հրատարակեց Սպանիայի կարլիստներին, յորդորելով մասնակցել Սան-Սեբաստիանում կիրակի օրը կայանալիք ցոյցին:

Նավարրի, Ալավի, Բիսկայի և Գվիպուսկոյի նահանգները, ուր նկատվում են ապստամբական շարժման նշաններ, ուղարկվեցին զորքեր: (Հ. Գ.)

Մադրիդ, 23 յուլիսի

Քաղաքացիական ու զինուորական իշխանութիւններին պատուիրագրվեց թոյլ չը տալ Սան-Սեբաստիան մտնել նրանց, որոնք ցանկանում են յուլիսի 25-ին ցոյց սարքել: (Հ. Գ.)

Լոնդոն, 23 յուլիսի

Րէյտէրի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, արտաքին գործերի բրիտանական վարչութիւնը լիովին համաձայնութիւն յայտնեց Ամերիկայի ծրագրի առիթով, որով վերջ է դրվելու Լիբէրիայի դժուարին կացութեանը: (Հ. Գ.)

Բուդապեշտ, 23 յուլիսի

Մագնատների պալատը ընդունեց բոլոր այն օրինագծերը, որոնք ընդունվել էին պատգամաւորների պալատից: Շաբաթ օրը պատգամաւորների պալատը կը գումարվի վերջին անգամ ամառային արձակուրդներից առաջ: (Հ. Գ.)

Սերաեվօ, 23 յուլիսի

Բօսնիական սէյմը ընդունեց բիւջէտը և վերջացրեց ամառային նստաշրջանը: (Հ. Գ.)

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կ. Պոլիս, 23 յուլիսի

Ստորագրվեց ռուս-թիւրքական համաձայնութիւն այն մասին, որ Հաագայի դատարանի պէտք է յանձնվեն ռուս-թիւրքական պատերազմին ժամանակ վնասված ռուսահպատակներին բաւարարութիւն տալու գործերը:

Ուսկիւբի պատգամաւոր բօլգար Պաւլովը մեծ վէզիրին բողոք ներկայացրեց, թէ մակեդոնական բօլգարներից զէնքերը խլելիս խստութիւններ են գործադրվում: Թւած է 18 գիւղ, ուր ծեծի է ենթարկվել բօլգարական ազգաբնակութիւնը: Պաւլովը պահանջում է պատժել յանցաւորներին:

Եկաւ անգլիական մի պատգամաւորութիւն Գէորգ թագաւորի գահակալութեան մասին հաղորդելու: Պատգամաւորութիւնը սուլթանին կը ներկայանայ վաղը:

Յուլիսի 26-ին երեք պատերազմական նաւերով Անտիվարի է մեկնում յատուկ մասնաժողով՝ գլուխ ունենալով Հիլմի փաշային՝ ողջունելու չերնոգօրական իշխանի յօբելեանը: Մասնաժողովը մի թանգարժէք ընծայ է տանում սուլթանի կողմից: (Հ. Գ.)

Թէհրան, 23 յուլիսի

Հրատարակվեց կառավարական հրովարտակ՝ թէ ոյժով կը խլվեն զէնքերը կամքով չը յանձնողներից: Չը լսողները կը պատժվեն, դիմադրողները կը գնդակահարվեն, իսկ նրանց տները կը կործանվեն թնդանօթներով: Վարձատրութիւն է խոստացվում նրանց, որոնք ցոյց կը տան զէնքերի պահեստատեղիներ: Ֆէդայիները պատրաստվում են յամառ դիմադրութեան: (Հ. Գ.)

Թէհրան, 23 յուլիսի

Մինիստրների խորհուրդը իշխան Վաղբօլսկիի մասնակցութեամբ քննեց ընդհանուր զինաթափման հարցը: Ֆէդայիները, միտինգի ժողովվելով Աթաբէգի այգում, պատրաստվում են դիմադրել: Սաթթար և Բաղըր խաները, սարդար Մուհին և Զերգամ-ուս-Սալթանէն հրաժարվում են զէնքերը վայր դնելուց, մատնանշելով որ կառավարութիւնը ձգտում է զինաթափ անել Թաղի զադէի հակառակորդներին, թողնելով Հայդար խանի խմբի զէնքերը, որ շատ է կասկածվում սեիդ Աբդուլլահի սպանութեան մէջ:

Կառավարութիւնը յապաղում է վճռական միջոցներ ձեռք առնել:

Մայրաքաղաքը լի է զինված ֆէդայիների և բախտիարների խմբերով: (Հ. Գ.)

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Էջմիածնի և Սիսի կաթողիկոսութեանց հաղորդակցութեան և իրաւասութեանց անիմաստ և այլևս սպառ անտեղի խնդիրները, քաղաքավարական արտաքին ձևերը պահպանելով հանդերձ, իրենց թագուն անհամաձայնութեամբը կիլիկեան հայութիւնը այսօր ցաւալի կացութեան մը մատնած են:

Ատեն մը երբ այնքան ջանքեր կըլլան, ու բաւական ալ յաջողուած է՝ հայ բողոքական և կաթոլիկ յարանուանութեանց հետ եղող դաւանական տարբերութիւններէ առաջացած թիւրիմացութիւնները դարմանել, կիլիկեան աղէտներուն հետևող օրերուն մեր կացուած այս պատկերը չափազանց տխուր կը դառնայ և յատկանշական:

Այսօր Կիլիկիոյ ամենակարևոր թեմերը թափուր կը մնան: Ադանայի, Մարաշի, Անթապի նման և այլ առաջնակարգ կեդրոնները, առաջնորդներու և առաջնորդացուներու չքաւորութեան պատճառաւ, անհովիւ են...

Թերևս խորհուի, որ լքումի, մեկուսացումի այս տարօրինակ երևոյթը հետևանք է օսմանեան կառավարութեան յարուցած խոչընդոտներուն և երեկուայ արհաւիրքներու ստեղծած կացութեանը:

Սխալ, բոլորովին սխալ: Մենք միշտ պատրաստ և շուտիկ եղած ենք ուրիշը քննադատելու, մեր մեղքը և անկումին բովանդակ ծանրութիւնը ուրիշներու վիզին փաթթելու: Ինչ որ պէտք էր ու կատարելապէս կը պակսի՝ անկեղծութիւնը և ինքնաքննութիւնն եղած է, ճանչնալու և խոստուժելու համար թէ՝ արդարև մեր համազգային աղէտներուն և վատասերումի պատճառներուն մէջ հսկայ բաժինը մենք իսկ ստեղծած ենք, դրդուած մասնաւոր հաշիւներէ՝ յաճախ անխոստովանելի, թէև քողարկուած մարգարտաշար քօղերով։

Այսօր, օրինակի համար, ըսենք թէ՝ Ադանայի նման թեմ մը,—ուր կառավարութիւնը և երիտ.-թիւրքերը իրենց ամենակարող և խելացի անձնաւորութիւններէն մէկը կուսակալ ղրկած են, և ուր եւրոպացիք իրարու ետեւէ հիւպատոսներ կը տեղացնեն,—առաջնորդէ թափուր կը մնայ։ Դիտէ՞ք ինչու։ Որովհետև Ադանան Սիսին ենթակայ է և այն վարդապետը, որ այդ թեմին իր մատուցած ծառայութիւններով՝ ենթադրենք թէ՝ արժանի ըլլայ Կիլիկիոյ կաթողիկոսին գնահատութեան և... Աստուած մի՛ արասցէ, անկէ եպիսկոպոս ձեռնադրուելու դժբաղդութիւնը ունենայ, այդպիսին իր բովանդակ ապագան պիտի վտանգէ։ Այո՛, այդ անբաղդ եպիսկոպոսացեալը ոչ միայն Թիւրքիայի, Ամերիկայի և Եւրոպայի թեմերուն մէջ պիտի չկրնայ իբր հայ առաջնորդ, հոգևոր հովիւ պաշտօնավարել, հանգոյն հերձուածողի մը, այլ և իր սիրտէն խսպառ հանելու է՝ ամեն արժանաւոր հայ եկեղեցականի ձգտումը, փառասիրութիւնը և իր գործունէութեան խթանը եղող պատրիարքութեանց և կաթողիկոսութեան յոյսը։

… Ու այսպէս՝ քիչ շատ, ազգէն աւելի՝ ինքզինքը յարգել և սիրել գիտցող եկեղեցական մը (այսինքն ամբողջութիւնը) կը քաշուի, կը զգուշանայ պարզապէս Կիլիկիոյ մէջ առաջնորդական պաշտօն մը ստանձնելու, չնայած որ այդ դժբաղդ գաւառին հայութիւնը—ամենէն աւելի ուշադրութեան և հոգածութեան կարօտ—պէտք էր որ անոր անձնուիրութեան և գուրգուրանաց առարկան ըլլար։

Եւ սակայն այդ միևնոյն Կիլիկիոյ համար ազգը—և անկեղծօրէն—որքա՜ն վիշտ, որքա՜ն սիրտ-հատում, որքա՜ն ջերմ վերաբերում մը ունեցաւ անոր ծանօթ աղէտին առթիւ, որ իրաւամբ իր ցաւերն եղան ու մնացին՝ հանուր ազգութեան ցաւերն ու վիշտը։

Ժամանակ մը, երբ բովանդակ մարդկութենէն եղբայրական զգացում մը և վերաբերում մը կը սպասէինք՝ մեր այդ տառապեալ հատուածին համար, մենք մեր մէջն իսկ և մեր նոյնանուն եկեղեցիին իր երկու աթոռներովը՝ այս հակասական, անպատուաբեր և միջնադարեան աններող ընթացքովը—առաջացած իրաւասական նրբին, բարձր և մեզ նմաններու անմատչելի ծանրակշիռ պատճառներէ—ամբողջ հայահոծ և առատապտուղ գաւառներ երեսի վրայ ձգելու խիղճ չենք ըներ դասալիքօրէն։

Ո՞վ է մեղաւորն այս տարօրինակ—գէթ մեզ համար—աններող քաղաքականութեանը, հայ եկեղեցւոյ ծոցին մէջ։

Սիսի և Էջմիածնի թեմերուն, կամ աւելի ճիշդ՝ Սիսի և Պոլսոյ պատրիարքութեան յարաբերութիւններու խնդիրը նոր չէ, դժբաղդաբար։ Բայց, գէթ, յուսալի էր, որ այդ աթոռներու վրայ բազմող վերջին տարիներու գահակալներու անձնական վերաբերմունքը և հաշտողի հեղինակութիւնը ատոնց լուծումը—որ գորդեան հանգոյց մը չէ սակայն—մեծապէս պիտի դիւրացնէին, այլեւ անշմարելի դառնալու չափ, առաջնորդուած՝ այս ու այն անժամանակ նկատումներէ աւելի՝ լայնամիտ և եղբայրական զգացումներէ։

Բայց չէ։ Խնդիրը՝ գոնէ երևութօրէն դատելով առաւել քան ծանրակշիռ է եղեր ու կը մնայ։

Կիլիկիոյ արդի վեհափառ կաթողիկոսը, Տ. Տ. Սահակ, ասկէ առաջ 7—8 կէտերէ բաղկացած պաշտօնագիր մը ղրկած է Պոլիս, որոնց ընդունելութիւնը մեծապէս պիտի դիւրացնէր յարաբերութեանց խնդիրը։

Սակայն, ինչպէս միշտ, պատրիարքարանը մինքեր-ալքը ըրած է ատոնք և այսօր չի վարանիր, ներկայ դառն և կրիտիկական վայրկեաններու մէջն իսկ, աթոռներու իրաւասական և դեռ չգիտեմ ինչական—թէև թագուն ու ծածուկ—խոչընդոտներ յարուցանելով՝ կիլիկեան թեմերու հոգևոր-ազգային կառավարութեան գործերն անդամալուծել։

Կիլիկիոյ կաթողիկոսը, իր վերոյիշեալ գրութեամբ, յանուն համազգակցութեան կառաջարկէ, օր. համար, թէ՝ ինքն առաջինն սկսի պատարագին մէջ յիշատակել ընդհանրական Հայրապետին անունը և իր թեմերն ալ նոյնը ընեն, պայմանաւ՝ սակայն՝ որ պատրիարքարանը և Թիւրքիայի միւս թեմերն ևս, նոյն զգացումէն դրդուած, Էջմիածնի Կաթողիկոսէն վերջը յիշատակելու բարեհաճութիւնը ունենան և Կիլիկիոյ կաթողիկոսը։

Կաթողիկոսը, համակերպելով պատրիարքարանի իրաւացի առարկութեանց, կընդունի որ յետ այսու իր ձեռնադրելիք եպիսկոպոսները վաւերացուին կեդրոնական վարչութենէն, բայց... պայմանաւ որ՝ այդ պատրիարքարանն ալ իր կողմէն հաճի ընդունիլ, որ՝ յետ այդ եղանակաւ ձեռնադրութեանց՝ այդ եպիսկոպոսները անարգել կարողանան պաշտօնավարել պատրիարքարանին ենթակայ բոլոր թեմերուն մէջ, առանց տարբերութեան միւս եպիսկոպոսներէն։

Ահա, ինչպէս կը տեսնէք, սա Կիլիկիոյ ս. կաթողիկոսը ի՞նչ հակազգային առաջարկներ կը բերէ, պարզապէս անընդունելի, որով և այսօր պատրիարքարանը և Էջմիածինը ոչ միայն չեն զիջանիր նկատողութեան առնելու եղբայրակցութեան այդ հրաւէրը, որ Սահակ կաթողիկոսին ազգասիրական և լուսամիտ զգացմանց պատուաբեր ապացոյցը կը մնայ՝ այլև, ինչպէս ըսի, սիստեմատիք հակառակութեամբ մը այդ կաթողիկոսութեան ոխը կիլիկեցիներէն կը հանեն։

Այո, պէտք է որ հայութիւնը ամբողջ հասկնայ թէ՝ ներկայիս մէջ Ադանայի նման քաղաք մը այս նկատումներով առանց առաջնորդի կը մնայ, և կաթողիկոսին ջանքերը՝ այդ նպատակաւ՝ բոլորովին ապարդիւն դարձած են։

Եւ դեռ ասոնք բաւական չեղած՝ այն մէկ քանի ոչ-կիլիկեան վարդապետները ևս, որոնք Կիլիկիոյ դժբաղդ թեմերէն մէկ քանիին մէջ կը պաշտօնավարեն՝ այնքան ձեռնհասօրէն և օգտակար կերպով, պատրիարքարանը գիր գիրի վրայ, հեռագիր հեռագիրի վրայ հասցնելով կը հրամայէ անոնց թողուլ թեմերնին և Պոլիս վերադառնալ կամ այլուր երթալ։

Այսպէս, օր. համար, Փառէն վարդապետը՝ Զոր-Մարզուանի հովիւը, այնքան սիրուած, տեղւոյն որբանոցներուն հոգին և պարտաճանաչ եկեղեցական մը։ Ի՞նչ, միթէ պատրիարքարանի համար եկեղեցակա՞ն մը կը պակսի Բաղէշ ղրկելու, որ Կիլիկիա գտնուող այդ մէկ վարդապետին աչք տնկած է, հակառակ Տ. Տ. Սահակ կաթողիկոսի դիմումներուն և թախանձանքներուն։

Այսպէս խնդիրն մըն ալ Էջմիածինէն եղաւ վերջերս Մուշեղ սրբազանին անուան շուրջը։ Ամերիկայի առաջնորդական ընտրելեաց ցանկին մէջ անոր անունն ևս գրուած էր... տգիտօրէն. և ահա Էջմիածինը իր գերագոյն veto-ով կը մերժէ այդ անձը։

Եթէ ազգը այլևս պէտք չունի Կիլիկիոյ աթոռին, լաւագոյն միջոցը կը մնայ՝ փոխանակ ամբողջ թեմեր անխնամութեան մատնելու՝ պարզապէս վերցնել զայն մէջտեղէն։ Իսկ եթէ կընդունինք անոր կարևորութիւնը, ներկայ ժամանակներու մէջ ամօթ մըն է այլևս, աններելի յանցանք մը՝ անժամանակ պատրուակներով զայն այս կացութեան մէջ ձգելը։

Այս կացութեան դիմելը ոչ միայն յանցանք մըն է, այլև նախատինք մը ազգին, վնասակար՝ անոր ընդհանրական շահերուն։

Աթոռներու այլևս անուանական իրաւասութեանց առարկութիւններով՝ կարելի չէ միշտ անպատուհաս թոյլատրել, որ ժողովրդեան շահերը ոտնատակ ըլլան թագուն, անիմաստ և անժամանակ նկատումներու։

Այո, կիլիկեան թեմերը այս պատճառաւ այժմ անառաջնորդ կը մնան։

Ահա՛ իրողութիւնը։ Ու ժողովուրդին կը թողունք դատել այս բռնազբօսիկ վիճակին բովանդակ տխուր հետևանքները և անոնց... պատասխանատուները։ Ն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ախալցխա, 22 յուլիս

Այսօր քաղաքիս ինտելիգենտ դասակարգի հիացմունքի և հետաքրքրութեան առարկան մի ինքնուս, անգրագէտ երիտասարդ հայի հրաշակերտ ձեռագործն է. ոչ ոք չէ համարձակւում և չէ կարող մի անուն յատկացնել արհեստին։ Մի քանի մասնագիտական արհեստներ միասին ամբողջացնում են ձեռակերտը, որի լայնութիւնը մօտաւորապէս 4 վերշօկ է, իսկ երկարութիւնը 6 վերշօկ։

Մուգ գոյնի, յղկած մարմարեայ պատուանդանի վրա կանգնեցրած է մի արկղիկ, ամեն կողմից զարդարված փղոսկրից մանրակերտ քանդակներով։ Արկղի կիսի վրա միացրած է մի տուփ, որի մէջը և բոլորը, թէ տուփի վերևը միկրոսկոպիական քանդակագործ, փղոսկրից տաշած նկարներով պատկերացնում են Էջմիածինը, տաճարն, անտառը, լիճը, լճի մէջ կենդանի ձկներ և լողացող մարդ։ Տուփի քամակին՝ քանդակագործ շրջանակի մէջ է առնված երկրագունդը. վերևից, հակառակ ուղղութեամբ, ցոլացնում են իրանց ճառագայթներն արևն և լուսինը. Թռչունները ճախրում են երկնակամարում. միւս կողմից երևում է Արաքսի կամրջից անցկացող երկաթուղային գնացքը մի քանի վագոններով. Ներքևում կանգնած է մի թռչուն, որ զսպանակի սեղմելով բարձրացնում է անկիւնի տփիկից գլանակը և մօտեցնելով սպիրտի փոքրիկ աշտանակին վառում է գլանակը, իսկ ցանկացողը կարող է առնել թռչունի կտուցից գլանակը և ծխել. այդպէս շարունակւում է և հետևեալը։ Կան և այլ քանդակներ առիւծների, սողունների և այլ անհամար մանրիկ կերտուածքներ մազի բարակութեամբ փղոսկրից, անագից, պողպատից և այլ նիւթերի բաղադրութեամբ, որի գաղտնիքը հնարագէտ վարպետը միայն գիտէ։

Յիշեալ արհեստագէտը, Նիկողայոս Գէորգեան անունով, ցոյց տուեց մեզ իր պատրաստած շատրուանը մարմարեայ աւազանի մէջ գեղեցիկ քանդակներով բարձրացած կլոր գլանների վրա. դրա գլխաւոր արժանաւորութիւնը նրանումն է, որ մի թէյի գաւաթ ջուրը բարձրանում է վերև մի քանի վերշօկ և մի ամիս անընդհատ շարունակվում, մինչև բոլոր ջրի գոլորշիանալը։

Նոյն վարպետը արել է նոյնպէս մի այլ գիւտ. նա հնարել է հրացան, «մօնթէ-կրիստօյի» չափով, որը մէջ զետեղում է մի հարիւր փամփուշտ, որ կարելի է արձակել մի րոպէում. վառօդը ինքն է հնարել մետաքսից։ Մենք չը տեսանք ոչ հրացանը և ոչ վառօդը։ Պատրաստած է եղել մի հատ, եղել են տեսնողներ, բայց, երկիւղ կրելով, վերջին խառնակութիւնների ժամանակ ջարդել-փչացնել է։ Այժմ, վարպետի խօսքով, քաղաքիս գաւառապետը, տեսնելով նոր ձեռակերտը և լսելով հրացանի մասին՝ խրախուսել է և խոստացել իր հովանաւորութիւնը, եթէ վերջին գիւտը կարողանայ գլուխ բերել։ Բայց որովհետև նիւթական միջոցներից զուրկ է, ուստի ցանկանում է ունենալ մի մեկենաս, մի բարերար, որ բարեհաճէր օգնութեան ձեռք կարկառել՝ իրագործելու ծրագրածները։ Պատրաստ է ներկայացնել իր տաղանդի արդիւնքը բարոյապէս և նիւթապէս խրախուսողներին։

Աւ. Աս.

Գորի, 22 յուլիսի

Մինչև 1904 թ. Գորու գաւառում շատ քիչ քանակութեամբ էին սխտոր ցանում, այսինքն այնքան, ինչքան որ իրանց հարկաւոր էր լինում տներում գործածելու համար։

1904 թ. ախալքալաքցի հինգ երիտասարդներ ադմինիստրացիայի կարգադրութեամբ աքսորվեցին Ռուսաստանի միջին նահանգները։ Այդ երիտասարդներից մէկը գրում է տեղիս իր մի ծանօթին, որ այնտեղ սխտորը լաւ գին ունի, և, եթէ կարող է, 100—300 պուդ ժողովէ և ուղարկէ վերադիր վճարով։ Մարդիկ ուղարկեցին գիւղերը և հազիւ հազ կարողացան ժողովել 150 պուդ, իւրաքանչիւր պուդը 40—60 կ.։ Գիւղացիք, տեսնելով սխտորի այսպէս բարձր գնով ծախվելը, հետևեալ տարին սկսեցին աւելի ցանել, և այնուհետև ամեն տարի սխտորի քանակութիւնը աւելանալով հասաւ հազարաւոր պուդերի, այնպէս որ այս տարի Գորու գաւառից Ռուսաստան կամ Կովկասի միւս քաղաքները արտահանված սխտորի քանակութիւնը հասաւ տասն վագօնների, այսինքն 5—6000 պուդի, և գինն էլ ոչ թէ 40—60 կ., այլ 1 ր. 40 կ.—1 ր. 60 կ.։ Ռուսաստանից պահանջը մեծ է։

Թող մեր գիւղացիք թողնեն իրանց նահապետական սովորութիւնը, որ անպատճառ ցորեն, գարի և եգիպտացորեն պիտի ցանեն և մէկ օրավար հողից պէտք է ստանան երկու տարէնը մի անգամ, եթէ բերքը լաւ լինի, մօտ 60 պուդ ցորեն և պուդը 60 կ. ծախելով 36 ր. ստանան, ասել է՝ տարեկան մէկ օրավարից 18 ր.,—և ցանեն միևնոյն օրավարում սխտոր, որից ամենայն տարի կը ստանան մօտ 80 պուդ, և եթէ պուդը ծախեն 1 ր. 40 կ., կը ստանան 112 ր.։

Մեզանում խոտաքաղը, ցորենի և գարու հունձը վերջացաւ բարենպաստ պայմաններում. բերքը առատ է. օրական մի քանի վագօն խոտ է ուղարկվում դէպի Բաթում. յոյս կայ, որ այս տարի մեր գիւղացու հին շապիկը նորոգվի։

Յուլիսի 18-ին տեղիս քաղ. այգում յօգուտ հայոց երկսեռ ծխ. դպրոցի կայացաւ ժողովրդական զբօսանք։ Եղանակը շատ բարենպաստ էր։ Մուտքի կողմից՝ զբօսանքը կարելի է համարել անաջող։ Զբօսանքի կարգադրուհին էր տ. Արէշեանը, որ եռանդով աշխատում էր զբօսանքի աջողութեան համար. նոյնպէս աշխատում էր օր. Դ. Կուլիջանեանցը՝ զբօսանքի աջողութեան համար։ Օրիորդն այսպիսի բարենպատակ գործերում չէ խնայում իր մասնակցութիւնը։

Գորեցի

Ծարսկիէ-Կոլոդցի, 21 յուլիսի

Այստեղից 3 վերստ հեռու մի ամայի սարի վրա գտնվում է վրաց Եղիա մարգարէի անունով ուխտատեղի, որի պատճառով այդ սարն էլ կոչվում է Եղիայի սար։ Ուխտատեղին շատ հին է և պատկանում է վրացիներին։ Յուլիսի 20-ին ամեն տարի տօնվում է այդ ուխտատեղիի տօնը։ Մերձակայ գիւղերից գալիս են բազմաթիւ վրացիներ սայլերով, ձիերով, գալիս են տղամարդիկ, կանայք, երեխաներ։ Լինում են ժողովրդական զուարճութիւններ, որից յետոյ ամբոխը ցրվում է։

Այս տարի տեղիս հեծելազօրքը Եղիայի սարի գագաթին կանգնեցրեց խաչ։ Խաչը վիթխարի է (12 արշ. բարձրութեան), շինված է երկաթից և թիթեղով պատած։ Երէկ տեղի ունեցաւ այդ խաչի հանդիսաւոր օրհնութիւնը։ Զօրքը հրաւիրել էր հիւրերին. կային կոյսեր Սղնախի ս. Նունէի մենաստանից։ Հանդիսաւոր թափօրը զօրքի մի մասի ուղեկցութեամբ այստեղի ռուսաց եկեղեցուց գնաց Եղիայի սարը, որտեղ կատարվեց հանդիսաւոր մաղթանք։ Տեղի ունեցան զինուորական նուագածութիւն և զալպեր, ի պատիւ խաչի օրհնութեան։ Այդ օրը Ծարսկիէ-Կոլոդցին դարձել էր կենդանի՝ անընդհատ երթևեկող կառքերի աղմուկից։

N. N.

Քութայիս, 23 յուլիսի

Երկու օր առաջ Թիֆլիսից եկող գնացքի տանիքի վրա նստում են երեք հոգի՝ տոմսակի վճարից խուսափելու համար։ Գնացքը Րիօն կայարանին մօտենալիս՝ ընդհարվում են կամուրջի վերևի երկաթէ կամարին, մէկի գլուխը ջարդվում է և տեղն ու տեղը սպանվում, միւսը շպրտվում է ջուրը և խեղդվում, իսկ երրորդը թեթև վիրաւորվում է։

Շուտով հանդիսաւոր կերպով կը բացվի այն հսկայական ջրանցքը, որ կառուցել են Անանեանները իրանց Աջամէտի կալուածքը ոռոգելու համար։ Առուն վերցված է Կվիրիլի գետից, կալուածքից տասն վերստ հեռաւորութեամբ, և պէտք է ոռոգէ 2000 դեսեատին տարածութիւն։ Առուի վրա աշխատում են 1,500 մշակներ։ Ինչ ասել կուզէ, որ այդ ջրանցքը, որը մի գետի հաւասար է իր լայնութեամբ, մեծ զարկ կը տայ գիւղատնտեսութեան։

Քութայիսում այս տարի բերքը շատ առատ է։ Թէ հացահատիկները և թէ մրգեղէնները համապատասխան եղանակի և անձրևների շնորհիւ լաւ աճեցին։ Երկաթուղին մեծ քանակութեամբ արտահանում է մրգեղէն։ Լաւ էր և բոժոժի բերքը և լաւ գնով էլ ծախվեց, շնորհիւ Կովկասի միւս քաղաքներից եկած թուրք գնողների։ Ամբողջ նահանգի գիւղացիները լաւ ապահովված կը լինեն, եթէ սիմինդրի և խաղողի հետ դժբաղդութիւն չը պատահի։

«Մշակի» նախավերջին համարում տպված «Кутаисскій Листокъ» լրագրի դադարման մասին լուրը սխալ է։ Լրագիրը լոյս է տեսնում անընդհատ։ Ս. Նազարեան

ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

III *)

Այժմ անցնենք տեսչի տեղեկագրին, որ կարդացվել է հոգաբարձութեան յունիսի 19 ի 27 րդ նիստում։

Տեղեկագրի առաջին երեսից երևում է, որ ուսուցչական կազմը բաղկացած է եղել 13 հոգուց (տեսչի հետ միասին)։ Ըստ կրթութեան նրանք մեր աչքի պատկերանում են հետևեալ կերպով. բարձրագոյն դպրոց աւարտածներ՝ 3 հոգի, բարձրագոյն դպրոցներում եղած, բայց չաւարտածներ՝ 3 հ., ճեմարանաւարտներ նոյնպէս 3 հ., թեմականաւարտներ՝ 2 հ., 1 հ. ճեմարանի Ա. լսարանից և 1 հոգի էլ Երևանի ուսուցչական սեմինարիաւարտ։ Կարճ. ամեն կատեգօրիայի և ամեն դաւանանքի անձինք եղել են դըպրոցում, որոնց թւում մի քանի հոգի անձեռնհաս ուսուցիչներ։

Դասերի բաշխումը եղել է անկանոն կերպով, 12—30 դաս շաբաթական, որից 2—2 դաս ուսուցիչները պարապել են ձրիաբար. դասագինը նոյնպէս անբարեխիղճ կերպով է սահմանված։ Այսպէս՝ որոշված է եղել 50 ր. տալ բարձրագոյն դպրոցաւարտներին, 40 ր. ոչ աւարտածներին և ճեմարանցիներին, իսկ 30 ր. մնացածներին։ Այդ կանոնը, չը գիտեմ ինչու, խախտվել է ուսուցիչներ Սէթ Յարութիւնեանի, Մկր. Մելիք-Յովսէփեանի և Իս. Տէր-Ղազարեանի վերաբերմամբ, վճարելով դասագին 50 րուբլի։ Սրանցից առաջինը ճեմանաւարտ է, երկրորդը ուսանող և երրորդը դասախօսութիւններ լսած Մօսկվայի, Բեռլինի և Լայպցիգի համալսարաններում։ Չեմ ասում, որ 50 ր. դասագինը բարձր է, ոչ. ինձ այստեղ զբաղեցնողը խնդրի սկզբունքային կողմն է, որ խախտված է տեսչի և հոգաբարձութեան կողմից։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱՂՎԱԾ ԳԱՂՏՆԻՔԸ

(Ճապօնական լեգենդա)

Շատ տարիներ առաջ Տամբա գաւառում ապրում էր Ինամուրայա Գէնզուկէ անունով մի հարուստ վաճառական։ Նա ունէր Օ-Սօնօ անունով մի աղջիկ։ Նրա գեղեցկութիւնն ու խելքը տեսնելով՝ հօր մեղքը գալիս էր թողնել նրան գիտութեան այն փոքրիկ պաշարով, որ նա ստացել էր գիւղական ուսումնարանում։ Ուստի մի բարեյոյս ուղեկցի հսկողութեան տակ, հայրը Օ-Սօնօյին ուղարկեց Կիօտօ, որ այնտեղ մայրաքաղաքի բոլոր օրիորդների նման բարձրագոյն կրթութիւն ստանայ։

Ուսման շրջանն աւարտելուց յետոյ՝ հայրը նրան կնութեան տուեց իր բարեկամ Նագարայա վաճառականին, որի հետ Օ-Սօնօն մօտ չորս տարի սիրով կենակցեց։ Նրանք մի տղայ զաւակ ունեցան։ Բայց ամուսնութեան չորրորդ տարվայ վերջին Օ-Սօնօն հիւանդացաւ ու մեռաւ։

Մեռելի թաղման օրվայ գիշերը նրա փոքրիկ որդին պատմեց, թէ իր մայրը յետ վերադարձաւ և գնաց վերև՝ իր սենեակը. Նա ժպտաց իրան, առանց մի բան ասելու, բայց ինքը վախեցաւ ու փախաւ։ Այն ժամանակ ազգականներից մի քանիսը բարձրացան վերևի սենեակը, որը առաջ Օ-Սօնօյի տրամադրութեան տակ էր, և մեծ տարակուսանքի մէջ ընկան, երբ վառվող ճրագի լոյսի տակ յայտնի կերպով տեսան մեռած երիտասարդ կնոջ կերպարանքը (ֆիգուրա)։ Նա կանգնած էր իր «տանզուի» (կամօդ) առաջ, որի մէջ դեռևս մնում էին նրա մի քանի զարդեղէններն ու թանգարժէք իրերը։

Նրա գլուխն ու ուսերը պարզ պատկերանում էին, իսկ դրանից ցած, նրա մարմնի մնացած մասերը այնպէս աղօտ էին ուրուագծված, որ նրանց որոշելը դժուար էր։ Ամբողջ կերպարանքը կարծես Օ-Սօնօյի գունատ արտացոլումն էր հայելիի մէջ՝ թափանցիկ՝ ջրի վրա ընկած ստուերի պէս։

Ամենքը սարսափահար եղած՝ շտապեցին փախչելու։ Ներքևում նրանք սկսեցին բացատրութիւններ տալ պատահարի մասին։ Օ-Սօնօյի սկեսուրն ասաց.

— Կանայք սիրում են իրանց իրերը. Օ-Սօնօն էլ բոլորովին նուիրված էր իր ստացուածքին։ Շատ կարելի է նա վերադարձաւ նրանց հսկելու համար։ Շատ մեռելներ այդպէս են անում, եթէ նրանց իրերը տաճար չեն ուղարկում։ Ես կարծում եմ, որ եթէ նրա շորերն ու գօտիները տանենք տաճար, նրա հոգին անշուշտ կը հանգստանայ։

Վճռվեց որքան կարելի է շուտով անել այդ բանը։ Հետևեալ առաւօտը հետախուզեցին տանզուի բոլոր արկղները և Օ-Սօնօյի բոլոր շորերն ու զարդարանքներն ուղարկեցին տաճար։ Բայց հետևեալ երեկոյեան Օ-Սօնօն դարձեալ յայտնվեց և նոյն անշարժ ու յառած հայեացքով կանգնեց իր տանզուի մօտ։ Նոյնը կրկնվեց երրորդ, չորրորդ և յաջորդ երեկոներին. վերջապէս իւրաքանչիւր երեկոյ նա յայտնվում էր և սարսափի մէջ գցում ամբողջ տունը։

Այն ժամանակ Օ-Սօնօյի սկեսուրը գնաց տաճար, պատմեց քրմապետին եղելութեան մասին և խնդրեց նրա իմաստուն խորհուրդը։ Տաճարը սուրբ էր, իսկ քրմապետն էր յայտնի Դայգէն-Օշօ իմաստուն ծերունին։

— Անշուշտ մի բան կայ տանզուի մէջ կամ նրա մօտ, որը նրան անհանգստացնում է,—ասաց ծերունին։

— Մենք տնտղեցինք բոլոր արկղները,—ասաց պառաւը,—ամեն ինչ հանեցինք. տանզուի մէջ էլ բան չը մնաց։

— Որ այդպէս է,—ասաց Դայգէն-Օշօն,—այսօր երեկոյեան ես կը գամ ձեր տուն, կը գիշերեմ այնտեղ, տեսնեմ ինչ բան է դա։ Իսկ դուք հոգ տարէք, որ քանի ես այնտեղ կը լինեմ, ոչ ոք այն սենեակը չը մտնի, մինչև որ ինքս չը կանչեմ։

Արևի մայր մտնելուց յետոյ Դայգէն-Օշօն եկաւ տուն, որտեղ սենեակն արդէն պատրաստել էին նրա համար և նրան մենմենակ թողին այնտեղ։ Նա նստած՝ սրբազան գրքեր էր կարդում. դեռ ոչինչ չը կար։ Բայց կէս-գիշերին յանկարծ որոշ կերպով երևացին տանզուի առաջ Օ-Սօնօյի կերպարանքի գծագրութիւնները։ Նրա դէմքը մտատանջութիւն և յուզմունք էր արտայայտում, իսկ աչքերը գամված էին տանջանքից։

Դայգէն Օշօն կարդաց այն սրբազան խօսքերը, որոնք առաջուց գրված էին նման դէպքերի համար, և դառնալով կայմիօ*) Օ-Սօնօյի ֆիգուրային՝ ասաց.

— Ձեզ օգնելու համար եմ եկել այստեղ։ Թերևս մնացել է տանզուի մէջ որևէ բան, որ ձեզ անհանգստանալու տեղիք է տալիս։ Փորձ անե՞մ արդեօք գտնելու այն ձեզ համար։

Ստուերը կարծես գլխով համաձայնութեան նշան արեց։ Ծերունին վեր կացաւ և դուրս քաշեց վերևի արկղը։ Տեսաւ՝ մէջը բան չը կայ։ Այն ժամանակ նա դուրս քաշեց երկրորդ, երրորդ և չորրորդ արկղները, մանրազննին խուզարկութեան ենթարկեց նրանց բոլորտիքը, տնտղեց տանզուի ներքին մասերը, բայց ոչնչից ոչինչ չը գտնվեց։

Իսկ ֆիգուրան տանզուից չէր հեռացնում իր քննական հայեացքը։

— Ուրիշ ի՞նչ կարող էր լինել,—մտածում էր ծերունին։

Յանկարծ նա գլխի ընկաւ, թէ՝ չը լինի՞ որևէ բան ընկած լինի այն թղթերի տակ, որոնցով ծածկված են արկղների յատակները։ Իսկոյն հանեց վերին արկղի թուղթը, բայց բան չը գտաւ։ Երկրորդ և երրորդ արկղների թղթերի տակ նոյնպէս բան չը կար։

Դուրս քաշեց ամենացածի արկղը և նրա յատակում, թղթերի տակ, գտաւ մի նամակ։

— Սա չէ՞ արդեօք ձեզ այդպէս անհանգստութեան պատճառը,—հարցրեց Դայգէն-Օշօն։

Կնոջ ստուերը դարձաւ դէպի նա և նրա հայեացքը կենտրոնացաւ նամակի վրա։

— Հարկաւո՞ր է այրել այս թէ՞ ոչ,—հարցրեց քրմապետը։

Ստուերը գլուխը խոնարհեց։

— Հէնց այսօր առաւօտեան սա կը վառվի տաճարի մէջ,—խոստացաւ ծերունին.—բացի ինձանից ուրիշ ոչ ոք չի կարդայ։

Ուրուականը ժպտաց և անյայտացաւ։

Լուսանում էր, երբ քրմապետը սանդուղքներով ցած իջաւ, որպէսզի տեսնի ննջեցեալի հարազատներին, որոնք սպասում էին՝ վախով, սարսափով բռնված։

— Այլ ևս չը վախենաք,—ասաց նա,—նա էլ երբէք չի երևայ։

Եւ հէնց նրա ասածի պէս էլ եղաւ. նա այլ ևս չերևաց։

Նամակը վառվեց։ Դա մի սիրահարական նամակ էր, որ Օ-Սօնօն ստացել էր մէկից, Կիօտօյում, դեռ ուսանողուհի եղած ժամանակ։ Սակայն նրա բովանդակութիւնը յայտնի եղաւ միմիայն քրմապետին և այդ գաղտնիքը նրա հետ էլ մեռաւ։

Թարգմ. Խաչ. Տէր-Ենոքեան

ԵՐԲԵՔ

Անշուք դագաղի մէջ դրված էր նա սեղանի վրա։

Գիշերները և ոտների մօտ ժամերը քաղ-

---

*) Տես «Մշակ» № 161.

*) Բուդդայական մականուն, որ տրվում է մեռնելուց յետոյ։

Ուղղակի աչք ծակող տպաւորութիւն է թողնում տեսչի զեկուցագրի այն մասը, որ վերաբերում Ս. Դէմուրեանի դասերին. այսպէս՝ նա դասերի թւի դիմաց փոխանակ որոշակի դնելու դասագրինը՝ գրում է «?». Մի բան, որ չը կայ մնացած ուսուցիչների վերաբերմամբ. այս հանելուկը կարող է լուծել ինքը տեսուչը միայն:

Աշակերտների թիւը տարվայ սկզբին եղել է 328. իսկ վերջում 301, որից 165-ը շուշեցիներ, իսկ 136-ը գաւառից:

Տարվայ ընթացքում պարապմունքներ եղել են 176 օր. ուսուցիչներից իւրաքանչիւրը դասերից ուշացել է 1—46 ժ., ընդամենը 267 ժամ, իսկ աւելորդ պարապած դասերի քանակը (2—66 ժ.) 232 է եղել, որը դուրս գալով 267-ից պարապած դասերի թւից՝ կը ստանանք 35 իրօք չը պարապած դաս:

Մանկավարժական ժողովներ (պաշտօնական) եղել են 34, որից ուսուցիչները ուշացել են 1—11 անգամ. ամենապարտաճանաչ ուսուցիչը եղել է Գաբրիէլ Ղուլիքեխեանը, որ ուշացել է մի անգամ միայն:

Տարվայ վերջում քննութիւններ եղել են առարկաների (գլխաւորապէս աւարտական) մի մասից, միւս առարկաներից աշակերտները փոխադրվել են տարեկան թւանշաններով:

Եթէ խօսելու լինենք տեսչի լեզուով, դուրս կը գայ, որ ամենաառաջադէմ դասարանը Դ.-ն է եղել, ապա Բ. պատ., Ե. դաս., Գ., Գ. զուգ. պատ., Զ. դաս., Ա. և Բ. դասարանները, և վերջապէս Գ. հիմ. պատ. «Այս ամենից անպէտք դասարանն է ամբողջ դպրոցում (տես տեղեկագիր, եր. 12):

Մեզ համար խիստ զարմանալի և անբացատրելի է Զ. դասարանցիներին վերաքննութիւններ տալը 1—6 առարկաներից ըստ մանկավարժական ժողովի և հոգաբարձական նիստի արձանագրութեանց և 1—2 առարկ. ըստ տեսչի տեղեկագրի: Եւ տեսուչն այստեղ մխիթարում է իրան նրանով, որ վերաքննելի աշակերտներն անպայման կանցնեն, որովհետև 1—2 առարկ. վերաքննութիւն ունեն: Նախ նկատենք, որ տեսչի տեղեկագրի այդ կէտը չէ համապատասխանում յիշածս երկու օրգանի արձանագրութիւններին, և երկրորդ՝ դա մի այնպիսի միջոց է, որ երբէք չէ գործադրվում մանկավարժական աշխարհում: Ո՞վ է տեսել, որ աւարտող աշակերտին վերաքննութիւն տան. դա մի սիստեմ է, որ գոյութիւն ունի գերմանական դոկտորի ղեկավարութեամբ պահվող դպրոցում միայն. մանկավարժական այդ մեթօդը օտար և խորթ է եղել Շուշու թեմական դպրոցում նոյնիսկ վեղարաւոր տեսուչների օրօք: Եւ սա կոչվում է դպրոցի առաջադիմութիւն, նրա բարգաւաճումն, ինչպէս յօխորտանքով յայտարարում է Տէր-Պօղոսեան «Մշակ» և «Հորիզոն» լրագիրներում (№ № 148 և 149):

Ապա տեսուչը ցոյց տալու համար թէ որչափ է աշակերտութիւնը հետաքրքրվել ընթերցանութեամբ՝ գրադարանին մի քանի խօսք նուիրելուց յետոյ ասում է, որ գրադարանից օգտվել են 130 հոգի, որոնք և կարդացել են 1440 գիրք հետևեալ կերպով.

Զ. դաս.	15	հ.	վերցրել են	180	գիրք.
Ե.	» 8	»	»	96	»
Դ.	» 22	»	»	321	»
Գ.	» 21	»	»	251	»
Բ.	» 41	»	»	454	»
Ա. հիմ. և զ. դ.	23	»	»	138	»

Պարզ է, որ աշակերտների ընթերցասիրութեան չափն այնքան էլ բարձր չի եղել:

Դպրոցն ունեցել է նաև իր չքաւորներին օգնող դրամարկղը, որ տարվայ ընթացքում մուտք ստացել է 202 ր. 40 կ., որից 82 ր. 50 կ. ստացված է երաժշտութեան ուսուցիչ Ստ. Դէմուրեանի համերգից, որի մի մասը, սակայն, վերցրել է ինքը Դէմուրեանը:

Այս բոլորից յետոյ տեսուչն անցնում է ուսուցչական խմբին՝ նախ ընդհանուր ակնարկ ձգելով նրա վրա և երկրորդ՝ առանձին-առանձին խօսելով իւրաքանչիւր ուսուցչի մասին: Թէ այդ ընդհանուր գծերը և թէ տեսչի միակողմանի և քմահաճօրէն տուած ատտեստացիաները խիստ ուշագրաւ լինելով՝ թոյլ ենք տալիս մեզ մանրամասնօրէն ծանրանալու այդ կարևոր հանգամանքի վրա:

«Ուսուցչական խմբի մէջ կան այնպիսի անձինք, —ասում է տեսուչը իր տեղեկագրի մէջ,—որոնց պարտաճանաչութիւնն ու բարեխղճութիւնը, եռանդն ու ջանասիրութիւնը, իրանց առարկայի մէջ ունեցած հմտութիւնն ու դպրոցասիրութիւնն ընդհանրապէս վեր է ամեն գովասանքից: Կան և այնպիսիները, սակայն, որոնք ըստ իրանց ներքին կոչման ուրիշ ասպարէզների համար յարմարագոյն են, քան ուսուցչական, որոնց բացակայութիւնից և չը լինելուց դպրոցը մեծապէս կօգտվէր. ուսուցիչներ, որոնք առիթներ էին որոնում թեթևանալու իրանց պարտականութիւնների կատարման մէջ, որոնց վերաբերմամբ որոշակի նկատելի էր, որ պաշտօն են վարում ոչ թէ ի սէր գործի, այլ այն շատ պարզ գիտակցութեամբ, թէ առանց դրան ռոճիկ ստանալ չէ կարելի: Այսպիսի «տարածին» անձերից կազմված ուսուցչական խմբի մէջ, բնական է, եղած ցանկալի համերաշխութիւնը տևել չէր կարող, մանաւանդ որ ոմանց համար շատ հաճելի էր, անշուշտ ոչ առանց յետին որոշակի նպատակների ու նենգաւոր միտումների, մեծ աշխատանքով ձեռք բերած համերաշխ և անդորր կեանքի մէջ՝ խռովութեան, չարութեան և անմիաբանութեան սերմը ցանել՝ առաջ դրած նըպատակներին հեշտութեամբ հասնելու համար» (տեղեկագիր, եր. 14—15):

Տեսչի խոստովանութիւնից պարզ երևում է, որ ուսուցիչների մի մասը տարվայ ընթացքում զբաղվել է ինտրիգներով, որից տուժել է դպրոցը միայն: Տեսուչը վնասակար այդ էլեմէնտներին դպրոցից հեռացնելու առաջարկն է անում հոգաբարձութեան: Մի հարց, սակայն, որ բնականօրէն առաջ է գալիս տեսչի՝ տեղեկագրի այդ մասից, դա ճշմարտութեան և ազնւութեան խնդիրն է նրա կողմից այն ուսուցիչների վերաբերմամբ, որոնց նա «անձեռնհաս», «անընդունակ», «անկոչում» և այլ տերմիններով է բնորոշում: Մի բան, որ չէ համապատասխանում իրականութեան:

Այսպէս, ուսուցիչ Լ. Թախտաճեանի մասին խօսելիս, խոստովանելով հանդերձ, որ նա ձեռնհաս ուսուցիչ է, տեսուչը միաժամանակ չէ մոռանում ասելու, որ նա «զարմանալիօրէն այս տարի զգալապէս թուլացաւ և խիստ տրամադրութիւն ցոյց տուեց պարտականութիւնները կատարելու մէջ թերանալու և կարծես թերացաւ էլ մինչ այն աստիճան, որ աշակերտների մէջ տըրտունջ առաջացրեց»:

Այստեղ տեսուչը չէ յիշում, սակայն, թէ երբ է եղել այդ դէպքը և ինչ բանի առիթով: Եւ նա վերջացնում է իր խօսքերը այսպէս. «Այնպիսի ուսուցիչ է դարձել (խօսքը Թախտաճեանի մասին է), որի գլխին պէտք է կանգնել և աշխատել տալ, և այդ դէպքում պիտանի և արդիւնաւոր կը լինի» (տեղեկ., եր. 17):

Ուսուց. Բ. Թորոսեանին նա համարում է եռանդոտ, ընթերցասէր և պարապող անձն, բայց ի վերջոյ ասում է, որ «թեմական դպրոցը մանաւանդ՝ նրա տեղը չէ» (տեղեկագիր, եր. 17):

Ուսուց. Գեդ. Տէր-Մինասեանին, որ անցեալ տարի տեսուչը գովել էր, այս տարի պախարակում և կեղտոտ գոյներով է նկարագրում նրա գործունէութիւնը: «Իսկ թէ նա այս ամբողջ տարին դպրոցում ինչ դեր է խաղացել, այդ մասին բարւոք եմ համարում լռել: Դպրոցի բարոյականութիւնը պահանջում է, որ այսպիսի անձն չը լինի մեր մէջ» (տեղեկ., եր. 18):

Ինչո՞ւ, ինչո՞ւ համար այդ անձը չը լինի դպրոցում՝ տեսուչը լռութիւն է պահպանում. նա «բարւոք է համարում լռել»:

Ապա տեսուչը Տէր-Ղազարեանին, Տէր-Միքայէլեանին, Տօնեանին, Աստուածատրեանին և Մելիք-Յովսէփեանին գովել է. ուշագրաւ են այս տողերը. «Ռուսերէնից գրաւոր աշխատանքներ ևս այս տարի անհամեմատ աւելի շատ են եղել, քան անցեալ և մանաւանդ նախանցեալ տարիները» (տեղեկ., եր. 20):

Այստեղ մոռանում է տեսուչը, որ քանակը չէ գլխաւորը, այլ որակը:

Գաբրիէլ վարժապետին և Դէմուրեանին ևս իրանց (ըստ տեսչի) տեղը տալուց յետոյ՝ տեսուչը կատարեալ մի ներբող է կարդում Սէթ Յարութիւնեանի հասցէին նրա համար, որ «աշակերտները այս տարի Խորենացի և Եղիշէ էին կարդացել»: «Յանձին Յարութիւնեանի՝ մեր թեմ. դպրոցն իր արժանաւոր հայերէնագէտ ուսուցիչն ունի, որի օրով հայոց լեզուն իր ցանկալի բարձրութեան վրա կը լինի միշտ» (տեղեկ., եր. 20):

Որ հայոց լեզուն կաղում է մեր մէջ, դա իրողութիւն է. ամենքիս յայտնի է, որ մեր աշակերտները հայերէն չը գիտեն:

Ինչ վերաբերում է Աղամալեանին, տեսուչն առատօրէն մի քանի երես է նուիրել նրան իր տեղեկագրի մէջ. նրա յայտնած կարծիքների հետ արդէն ընթերցողը ծանօթ է մեր յօդուածի երկրորդ մասից:

Առհասարակ տեսչի ամբողջ տեղեկագրից երևում է, որ նա հովանաւորում է իր կուսակիցներին և համախոհներին, և դատապարտում ու ցեխի հետ հաւասարեցնում իր հակառակորդներին:

Այսպիսով մենք տուինք Շուշու թեմ. դպրոցի 1909/10 ուսումն. տարվայ համառօտակի, բայց մօտաւոր պատկերը:

Շուշի, 18 յուլիսի — Ոսկու-Ջօն

ԽՈԼԵՐԱ

◆ Բիւլլետեն.—Յուլիսի 23-ի առաւօտ. ժ. 9-ից մինչև յուլիսի 24-ի առաւօտ. ժամը 9-ը Թիֆլիսում խոլերայով հիւանդացել են 7 հոգի, իսկ խոլերանման հիւանդութեամբ՝ 1 հոգի: Հիւանդանոցում կային 46 հոգի, աւելացել են 5, առողջացել և դուրս է եկել 1, մեռել է 1, ներկայումս մնում են 49 հոգի:

◆ Յուլիսի 23-ին Թիֆլիսում խոլերայով հիւանդացել և տարվել են բարակները հետևեալ անձերը. 1) Մեծ-Վանքի փողոցում ընկած՝ Պետերբուրգի բնակիչ Կոնստանտին Գր. Դունայէվը, 30 տարեկան, առանց պարապմունքի: 2) Ֆօմինայա փող. № 8 տանը՝ գործցի Տատիանա Անաքելեանը, 28 տար., որը բժշկվում է իր տանը: 3) Ֆաբրիչնի տուպիկում № 5 տանը՝ պարսկահպատակ մաշադի-Իբրահիմ Խալիլ-օղլին, 41 տար. (առևտրական), որը մեռաւ: 4) Կարգէբովսկայա փողոցում № 15 տանը՝ Սղնախ քաղաքի բնակչի որդի Գրիգոր Ս. Իսայէվը, 6 տարեկ.: 5) Նոյն տանը՝ Թիֆլիս քաղ. բնակչի որդի Արսէն Ի. Գոտիաշվիլին, 4 տարեկ.: 6) Աւճալսկայա փողոցում իր սեփ. տանը՝ Միխայիլ Կրիվօնօսովը, 40 տար., որը մեռաւ: 7) Ծղնէթսկայա փող. № 49 տանը՝ պարսկահպատակ Ջհան Կարա-Րիզա օղլին: Հիւանդացածների բնակարանները ախտահանված են:

◆ Թիֆլիսում խոլերայի սկզբից մինչև յուլիսի 1-ը, համաձայն բժշկա-սանիտարական մարմնի տեղեկութիւնների, հիւանդացել են ընդամենը 385 հոգի: Ըստ թաղամասերի ստացվում է հետևեալ պատկերը. I-ին քաղաքամասում եղել է 25 դէպք, II-ում՝ 19, III-ում՝ 15, VI-ում՝ 25, V-ում՝ 50, VI ում՝ 28, VII-ում՝ 29, VIII-ում՝ 38, IX-ում՝ 58, X-ում՝ 32, XI-ում՝ 26 և XII-ում՝ 21: Եկւոր հիւանդացածների և մեռածների թիւ 19:

◆ Քութայիսից մեզ գրում են. «Վերջապէս Քութայիսումն էլ յայտնվեց խոլերան: Յուլիսի 21-ին բարակները տարան 4 հոգի, իսկ 22-ին՝ 5 հոգի. վախճանվեց մէկը: Բարակներում մնում են 7 հոգի: Քաղաքում արտակարգ միջոցներ են ձեռք առնված հիւանդութեան դէմ կռւելու համար: Պէտք է ասած, որ տեղիս սարսափած ու մահից դողացող ժողովուրդը յօժարակամ կատարում է իշխանութեան կարգադրութիւնները: Յուլիսի 22-ին փակվեցին Րիոնի վրա գտնվող լողարանները: Յոյս կայ, որ քութայիսցիների սիրելի նահանգապետ գեներալ Սլավօչինսկին, որ իրան յատուկ եռանդով և վարպետութեամբ երկիրը մաքրեց աւազակներից, մարդասպաններից և յափշտակիչներից, կտրուկ միջոցներ ձեռք կառնէ զսպելու խոլերայի տարածումը:

«Խոլերայի երկիւղի տակ քաղաքը ժողովրդից հետզհետէ դատարկվում է: Քաղաքից դուրս եկող գնացքները այնքան լիքն են լինում, որ երբեմն երկու շոգեկառք են միացնում գնացքին»:

—

23 յուլիսի

Պետերբուրգում յուլիսի 23-ին հիւանդացան 97, մեռան 21, կան 672: Շըրջակայքում կան 21:

Եւպատորիայում մի շաբաթում հիւանդացան 22, մեռան 10, առողջացան 5:

Պոլտավայի նահ. հիւ. 242, մեռան 105:

Մոսկվայում մի օրում հիւ. 4, մեռան 2:

Խոլերան մեծ չափեր է ընդունում Կրոնշտադում: Բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք են առնված:

Մարիուպոլից հաղորդում են, որ շրջակայքում վարակվել են 45 տեղեր: (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» հետևեալ համարը մեռելոցի պատճառով լոյս կը տեսնի չորեքշաբթի, յուլիսի 28-ին:

◆ Կովկասի Փոխարքայի զինւորական մասի օգնական գեներալ Շատիլովը յուլիսի 23-ին մեկնեց Վլադիկավկազ արտիլերիական վարժութիւններին ներկայ լինելու համար: Գեներալը Թիֆլիս կը վերադառնայ յուլիսի 27-ին:

◆ Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան մինիստրի կովկասեան լիազօրի դիւանատանը ներկայումս ժողովում են տեղեկութիւններ այն գիւղատնտեսական նըկարների և տեսարանների մասին, որ ցանկալի է ցոյց տալ մոգական լապտերի կամ սինեմատոգրաֆի միջոցով դասախօսութիւնների ժամանակ:

◆ Կարսում կայանալիք շրջանային գիւղատնտեսական ցուցահանդէսը խոլերայի պատճառով յետաձգվում է անորոշ ժամանակով:

◆ Մեզ հաղորդում են, որ այս տարի շատ տեղերից դիմումներ են արել Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեանը՝ ուղարկելու նրանց զտիչ մեքենաներ (ВѢЯЛКА): Այդ մեքենաների շինելը դժուար չէ, ուստի յոյս կայ, որ մեր երկրի վարպետները սկսեն շինել այդպիսիները աւելի ձեռնտու պայմաններով:

◆ Խոլերայի դէմ մաքառող գործադիր բիւրօն անցեալ օրը անակնկալ քննութիւն կատարեց «Տիլիպուճուր» հիւրանոցում, Լոտի և Մասիսյի կոնդիտերսկիներում, Վարդանեանի վարսավիրական արհեստանոցում և Դվորցովայա փողոցի այլ խանութներում: Հակասանիտարական դրութիւն երևան եկաւ Վարդանեանի արհեստանոցում, «Տիլիպուճուր» հիւրանոցում և մի քանի ճաշարաններում: Տէրերին առաջարկված է երեք օրում վերացնել բոլոր դէֆեկտները:

◆ Թիֆլիսի թեմի առաջնորդի կողմից հաստատվելով Մէյդանի ս. Գէորգ եկեղեցու երեցփոխ՝ պաշտօնում՝ Արգար Գրիգորեան Աբուլեանցը արդէն ստանձնել է իր պաշտօնը:

◆ Լոյս յուլիսի 18-ի գիշերը Թիֆլիսում, Ցերկօվնի վերելքում, № 8 տանը պահնորդական բաժանմունքի ոստիկանները գրաւեցին ռուսական սօցիալ-դեմօկրատական Թիֆլիսի բաժանմունքի գաղտնի տպարանը: Տպարանի շինութեան մէջ գտնվեցին փոքր քանակով անլէգալ գրուածքներ: Ձերբակալված են 9 հոգի:

◆ Թիֆլիսումն է Պարիզի արևելեան ֆակուլտէտի քարտուղար Րէբին՝ գիւղական աշխատանքներ կատարելու համար: Րէբին նպատակ ունի գլխաւորապէս ուսումնասիրել վրաց գրականութիւնը և լեզուն:

◆ Թիֆլիսում օդերևութաբանական կայարան հիմնելու հարցը ունի հետաքրքրողների բաւական ստուար թիւ նաև դրսից: Ներկայումս Թիֆլիս է եկել Դոնի պոլիտեխնիկումի պրոֆեսոր Միլովիչը, որ ձեռնարկել է մօտից ծանօթանալու գործի մանրամասնութիւնների հետ: Քաղաքային վարչութիւնը սիրայօժար ցոյց է տալիս աջակցութիւն, հայթայթելով ամեն տեսակ տեղեկութիւններ կայարանի կառուցման վերաբերեալ:

◆ Թիֆլիսի առաջին խոհարարական դասընթացքներն սկզբի տարում աւարտեցին 45 կին:

◆ Բժշկական գլխաւոր մարմինը բացատրել է, որ «Սէն-Րաֆայէլ» գինին, որի մասին համարեա ամեն օր մեծ-մեծ ռեկլամներ են տպագրվում լրագիրների յայտարարութիւնների բաժնում՝ իբր նրա հրաշագործ ազդեցութեան մասին խոլերայի ժամանակ, չէ պարունակում իր մէջ առանձին բուժիչ յատկութիւններ և նրան պէտք է դասել սովորական խաղողի գինիների շարքում:

◆ Թիոնէթի գաւառում կարկուտը վնաս է պատճառել 18,000 րուբլու չափ:

◆ Բարձր շրջաններում միտք է յղացել, արքունի հաշւով գնել Վլադիկավկազեան երկաթուղին:

◆ Ալեքսանդրապօլի քաղաքային դուման իր վերջին նիստում որոշեց Ալեքսանդրապօլում մտցնել էլեքտրական լուսաւորութիւն: Այդ առիթով հրաւէր են ստացել Թիֆլիսից գնալ Ալեքսանդրապօլ և մասնակցել հարցի քննութեանը ինժեներ Նալբանդեանը և էլեքտրական կայարանի ներկայացուցիչ Պօլակը:

◆ Թիֆլիսում օդը մեղմացել է համեմատաբար: Ցերեկով լինում է շոգ, իսկ գիշերները զով է անում և ջերմաչափը ցոյց է տալիս բաց օդում 15—17 աստիճան ըստ Րէօմիւրի:

◆ Մեզ հաղորդում են Ցխինվալից, որ այնտեղի տնայնագործական արհեստանոցը առաջ է գնում աջողութեամբ: Վարպետուհի Աննա Մարգարեանի ղեկավարութեամբ աշակերտուհիները պատրաստել են ջէջիմներ, մութաքաներ, սրբիչներ և ուրիշ գործուածքներ: Շուտով մտադրութիւն կայ մի բազար սարքել և արհեստանոցի իրերը վաճառքի հանել: Վարպետուհին պէտք է մնայ Ցխինվալում մինչև նոյեմբերի մէկը, այնուհետև գործը կը շարունակեն սովորած աշակերտուհիները ինքնուրոյն կերպով:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Մեծ Ղարաքիլիսա, 23 յուլիսի

Ամսիս 18-ին դերասան Միրզոյեանը իր բենեֆիսին դրել էր Իբսէնի «Դոկտոր Շտօկման» դրաման: Աչքի առաջ ունենալով դերակատարների համեստ ուժերը, պիեսի ընտրութիւնը ոչ միայն անաջող էր, այլև ղեկավարի կողմից, թող թոյլ տրվի մեզ ասելու, անհամեստութիւն::

Մանաւանդ Շտօկմանի պատասխանատու դերը, չը գիտենք ինչո՞ւ համար, վերց-

---

կլտող բոցով վառված էին: Դագաղից մի փոքր հեռու, նստած էր ալեխառն մազերով կարճահասակ մի մարդ և միալար բեթացնող ձայնով սաղմոս էր կարդում:

Կէս գիշերից անց էր: Ննջեցեալի սենեակին կից սենեակը լուսաւորված էր լուսնի լոյսով, որը թափվել էր պատուհանից ներս մի ինչ-որ կախարդիչ, խորհրդաւոր բան սփռելով շուրջը: Լուսնի լոյսով հազիւ նըշմարվում էր հազիւ 17 տարեկան գունատ մի աղջիկ, որը նստած էր պատուհանի մօտ. նրա հայեացքը սառել էր մի կէտի, դէմքը ոչինչ չէր արտայայտում: Նրանից մի քիչ հեռու նստած էր գլուխը ձեռների մէջ՝ մի տղայ:

Երկար նրանք այդպէս լուռ՝ անշարժ նստած էին: Նրանցից ոչ մէկը կարծես չէր ուզում շարժվել, ձայն հանել, նայել դիմացինին:

Փողոցից էլ ոչ մի ձայն չէր գալիս. միմիայն միւս սենեակից լսվում էր ծերուկի տխուր, միալար ձայնը, որը կարծես թէ լսվում էր հեռուից, գետնի խորքից, մերթ ուժեղ, մերթ նուաղ, համարեա անլսելի:

Ընթերցումը յանկարծ ընդհատվեց, մի քիչ անց՝ մի բան ընկաւ յատակի վրա, և տղան ու աղջիկը լուռ նայեցին միմեանց:

— Այդ ինչ ձայն էր:

— Գիրքն ընկաւ. երևի քնեց,—պատասխանեց տղան, տեղից չը շարժվելով:

— Վերջապէս:

— Լուսիկ, գնա հանգստացիր,—գլուխը բարձրացնելով՝ ասաց տղան:

Աղջիկը ոչինչ չը պատասխանեց. ձեռքի թաշկինակը ամուր սեղմեց աչքերին, կարծես խեղդելու արցունքները. նա լուռ հեկեկում էր: Յանկարծ, կարծես չը կարողանալով զսպել, յամառ արցունքները թողեց որ թափվեն:

Տղան լուռ էր. նա ուզում էր մօտենալ քրոջը, հանգստացնել, բայց նրան թւաց թէ բերանը չէ բացվում, ոտները չեն հնազանդվում, չէ կարող արտասանել ոչ մի խօսք, որ ձայն էլ չը կայ:

— Լուսիկ, բաւական է...,—կարծես ուժով ասաց նա և լռեց:

Աղջիկը լուռ անցաւ հարևան սենեակը և ընկաւ մահճակալի վրա:

Տղան մօտեցաւ լուսամուտին, սկսեց հետևել լուսնի ընթացքին, որը կարծես լողում էր այդ ջինջ կապոյտ ծովում: Աստղերը երկիւղածութեամբ ճանապարհ էին տալիս իրանց թախծալի տիրուհուն: Նա մի տեսակ ինքնամոռացութեան մէջ ընկաւ. ոչինչ չէր յիշում. ամեն բան երազի նման էր: Յանկարծ նա ցնցվեց, ականջին հասաւ քրոջ լացի ձայնը, ու դիմեց դէպի նրա սենեակը:

— Բաւական է, դադարիր, Լուսիկ, դադարիր, չէ՞ որ դա անմտութիւն է:

— Գիտես, մենք էլ երբէք, երբէք չենք տեսնելու մայրիկին,—շնչաց աղջիկը հեկեկանքների միջից և ընկաւ եղբօր գիրկը:

— Երբէք... երբէք... երբէք...,—մի քանի անգամ մտքում կրկնեց տղան և չը կարողացաւ ոչինչ ասել:

— Դու գիտես, Սուրէն, ես չեմ ուզում հաւատալ. ինձ թւում է, թէ նա ապրում է, մէկը կարծես շարունակ շշնջում է, որ նա ապրում է, ապրում է... Ես ուզում եմ հաւատալ, որ նա ապրում է, որ յաւիտեան չը գնաց, նորից մի որևէ ժամանակ կը գայ մեզ մօտ. ուզում եմ հաւատալ, որ ապրում է:

— Այո, գուցէ մի աւելի լաւ կեանքում:

— Դու հաւատում ես այդ կեանքին:

— Հաւատում եմ: Այո:

— Չը գիտեմ, մի կեանք, որտեղ չը կայ ոչ վիշտ, ոչ հոգս. ինչ լաւ է հաւատալ: Դա կը լինէր մի յոյս, որից մենք պինդ-պինդ կը բռնէինք, կը յուսայինք, որ մի որևէ ժամանակ մենք նորից կը հանդիպենք և էլ երբէք չենք բաժանվի: Ես, Սուրէն, ուզում եմ հաւատալ:

— Հանգստացիր, Լուսիկ, քո նեարդերը լարված են, պառկիր:

— Ոչ, ես չեմ կարող, չեմ կարող. աչքիս առաջ կրակի նման տառերով գրված են՝ «երբէք, երբէք»: Փակում եմ աչքերս՝ նրանք աւելի են պայծառանում: Նստիր մօտս, շատ մօտ. այդպէս. երբ դու մօտս ես, ես դեռ կարողանում եմ յուսալ:

Նրանք լուռ, երկար նստած էին. աղջիկը բռնել էր եղբօր ձեռքը իր պաղ, ձիւնի նման սառը ձեռներում և լայն բացած աչքերով նայում էր ուղիղ մի կէտի:

— Դու չը քնես, Սուրէն:

— Իմ քունս չէ տանում:

— Ինձ էլ չէ տանում, բայց այնպէս յոգնած եմ: Դու նստիր կողքիս, ես թէք կընկնեմ:

Աղջիկը գլուխը դրեց բարձի վրա և մի րոպէ անցած նա քնած էր:

Չորս կողմը լուռ էր: Տղան անշարժ նստած էր. մտքերը ցրված էին. մանկական յիշողութիւնները շարան-շարան գալիս անցնում էին՝ ոչ մի բանի վրա կանգ չառնելով: Նա դադարեց մտածելուց, անշարժ արձանի նման, նա մխված էր իր տեղում:

Ժամացոյցը երեք անգամ զարկեց, և սենեակում նորից տիրեց լռութիւն:

Մի քիչ անց՝ տղան սարսափահար վեր ցատկեց տեղից, կարծես մէկը ամուր ցնցեց նրան:

— Ո՞վ է... ո՞վ է...,—մի քանի անգամ հարցրեց նա, դիւակի նման դժգոյն դէմքով:

— Ես եմ, մի վախենար:

— Մայրիկ,—ճչաց տղան և ուշաթափ ընկաւ գետին:

Մայրը մօտեցաւ, կռացաւ, նրա վրա, համբուրեց ճակատը:

— Մի վախենար, վեր կաց:

Տղան բացեց աչքերը, նայեց մօրը. նրան թւաց, թէ երազ է:

— Ուշքի եկ, զաւակս, տղաս, մի վախենար, ես մեռած չեմ, ես շատ էի յոգնել, քնած էի: Ասա Լուսիկին, թող լաց չը լինի: Երբ ձիւները հալվեն, երբ ծառերը նորից կանաչեն, ես կրկին կը գամ ձեզ մօտ և էլ երբէք չեմ թողնի ձեզ: Սպասեցէք ինձ, հաւատացէք, հաւատացէք, մենք նորից կը տեսնվենք. ձիւները կը հալվեն, ես կը գամ և էլ երբէք, երբէք չեմ հեռանայ: Յիշեցէք ինձ և ես կապրեմ: Ես յոգնած էի, շատ էի յոգնած. ես մեռած չեմ, քնած եմ. այնպէս կազդուրիչ քուն է. ես վաղուց է՝ այսպէս անդորր չէի քնել. ես նորից կը պառկեմ և կը քնեմ: Մի լաց, մենք նորից կը տեսնվենք: Ես ապրում եմ, նոր սկսում եմ ապրել: Այս վերջին քնից յետոյ է որ մարդ սկսում է ապրել: Կեանքը սկսվում է, երբ վերջանում է նրա սկիզբը: Հաւատացէք, հաւատացէք, մենք նորից կը տեսնվենք: Ասա Լուսիկին, թող լաց չը լինի: Ես յոգնած եմ, ես նորից կը պառկեմ: Իսկ վաղը ես գնալու եմ, հեռու, հեռու, հեռու. ինչքան ճանապարհ կայ գնալու... Ցտեսութիւն, ցտեսութիւն:

Նա դանդաղ քայլերով անցաւ միւս սենեակը, վառեց մոմերը, մի անգամ էլ յետ նայեց, «ցտեսութիւն» կանչեց, պառկեց դագաղի մէջ և փակեց աչքերը:

Արդէն լուսանում էր, դպիրը սարսափած վեր թռաւ տեղից, խաչակնքեց երեսը, վերցրեց ոտների մօտ ընկած գիրքը և նորից սկսեց կարդալ: Միք. Մանուէլեան րել էր ինքը բենեֆիցիանտը, որ դժբաղդաբար չունի ոչ համապատասխան ձայն, ոչ բնական շարժումներ և ոչ էլ կանոնաւոր գրիմ ու միմիկա:

Դերասան Միրզոյեանի տուած Շտօկմանը Իբսէնի գաղափարական հերոսի հակատիպն էր:

Ահա այդ պատճառով էլ գեղեցիկ դրաման ուղղակի նահատակվեց, չը նայած դերակատարներից մի քանիսը—օրինակ տիկ. Ցամիկ, պ. պ. Ղազարեան, Դաւիթխանեան, Ահարոնեան—ամէն կերպ աշխատում էին ընդհանուր անսամբլը պահպանել:

Ահա թէ ինչ է նշանակում վստահանալ թոյլ և անփորձ ույժերի վրա և իրանց «եօրղանի գէօրա ոտը չը մեկնել»:

Հասարակութիւնը չափազանց դժգոհ հեռացաւ դահլիճից:

Ամսիս 21-ին, նոյն խումբը խաղաց Բրանդէսի «Հիւր» դրաման և «Կարմիր վարտիկ» վօդըվիլը: Դրաման անցաւ շատ թոյլ և ցանկալի տպաւորութիւնը չը գործեց: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ դերերը ըստ ամպլուայի չէին բաժանված:

Վօդըվիլը անցաւ բաւականին կենդանի՝ շնորհիւ տիկ. Ցամիկի, պ. պ. Միրզոյեանի, Ղազարեանի գեղեցիկ խաղին:

Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր:

Մ. Ղ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վահան Տէրեան. «Մթնշաղի անուրջներ», էջ 80.

Վահան Տէրեանի 80-էջից բաղկացած գրքոյկը՝ «Մթնշաղի անուրջներ» պարունակում է մեծ մասամբ սկսնակի երգեր՝ մանկական հաճելի թոթովանքների նման, որոնք կարող էին տեղ չը բռնել ժողովածուի մէջ, եթէ գրքի հրատարակութիւնը մի քանի տարով ուշանար: Միւս երգերը, որոնք մոխրի մէջ թաղված կայծերի նման առաջին հնարաւորութիւնից պատրաստ են բոցավառվել, բանաստեղծի հոգու զանազան նկարագրութիւնը, րոպէական ստացած տպաւորութիւններն են տալիս, բայց դեռ չը պարզված, մշուշով պատած:

Դեռ անորոշ է նրա տրամադրութիւնը, անորոշ են և ձգտումները, հետևապէս և գունաւորման ինչպիսութիւնը դժուար է գուշակել, մանաւանդ որ մինչև որոշ հասակ ինչպէս մարդկային մտքի մէջ յաճախ լինում են կերպարանափոխումներ և հակումներ, այնպէս էլ զգացմունքը հետզհետէ առաջ է բերում իր պարզ, որոշ արտայայտութիւնն ու թափը:

Վ. Տէրեանը դեռ անորոշ շրջանի մէջ է. թէև աշխատել է մօդեռնիստ լինել, բայց առ այժմ նրան չէ աջողվել. նա էլի մեր հին երգիչներից է, միայն առանց շեշտող գաղափարի, առանց ընդգծած ուղղու: Հատ ու կտոր երգերից և արտայայտութիւններից այն կարելի է եզրակացնել, որ մեր բանաստեղծի մատաղ հոգին խռովված է, սև շղարշով պատված, նրա սիրած եղանակը աշունն է, և նա պաղ մշուշում առանց արշալոյսի սպասում է իրիկուան, որը «տխուր թևերը պիտի փռէ, երկնքում անուրջ աստղեր պիտի վառէ, այն ժամանակ միայն հոգին պիտի լցնվի անուշ երազով»: Ահա այն մօտիվները, որոնք կազմում են Տէրեանի երգերի էական բովանդակութիւնը:

Բանաստեղծը շարունակ մթան հետ է, մշուշի մէջ, անձրևների տակ՝ ցնորքների ետևից, և կարծէք այս անհրապոյր դրութիւնների մէջ նա բաւականութիւն է գտնում, նրա հոգում արև չէ շողշողում, այլ, ինչպէս ինքն է խոստովանում, «մահու գիշերն է մթնել իմ հոգում»: Երբեմն էլ ամբողջ գիշերներ թափառում է փողոցներ, աննպատակ չափչփում մայթեր և «մեղմ լալիս ցուրտ մշուշի մէջ», որն արդէն հիւանդոտ դրութեան նշանն է: Ցանկալի էր մեր նոր բանաստեղծին այս դրութիւնից ելած տեսնել լոյս արևի ճակատով, աստղերի ցոլուն փայլով, որովհետև մշուշապատ հոգու այս արտայայտութիւնները գնահատելի և ուշադրութեան արժանի կը լինէին այն ժամանակ, երբ նրա սրտում ծաւալված լինէր համաշխարհային թախիծը, երբ հոգին խռովված լինէր տիեզերական վշտից. սակայն իրօք այդպէս չէ. նրա երգերը, ըստ երևոյթին, անձնական բնաւորութիւն են կրում, ուստի և շրջապատի համար կարող են կորչել, անհետանալ:

Խորհրդաւոր երեկոն նրա մէջ ծնեցնում է ոչ միայն հոգու թախիծ, այլ և սիրոյ կարօտ. նա կախարդված է լուսնով և աստղերով և սրանց շողերից ու ցոլքերից հիւսում է կոյսի գեղեցկութեան նկարագրութիւնը: Եւ միշտ էլ այսպիսի երեկոներին է սպասում կամ որոնում իր ցնորքին, իր սիրած էակին, որոնք՝

Շղթայված են իրարու,
Կարօտավառ երազում են իրար:
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան ու՜ հեռու,
Աստղերի պէս և հարազատ և օտար:

Սիրոյ զգացմունքը բանաստեղծի մէջ բաւական տարօրինակ է. երբեմն քնքոյշ, երբեմն էլ հիւանդոտ, մաղլկմի հասցրած.

Ինձ փաթաթիր, որպէս ամպ,
Խենթ աչքերդ լուռ փակիր.
Ժպտա կրքոտ բերկրութեամբ
Անցաւ կեանքս խորտակիր...
Ալեկոծուոր չուրթերն իմ,
Սիրուն աչքեր՝ ծիծաղը.
Թող աչքերս հեզ մեռնին՝
Կեանքս մարիր՝ դու փախիր:

Վ. Տէրեանի երգերի մէջ գերիշխող տարրը անհատական տխրութիւնն է. նա տենդով բռնվածի նման ոչ միայն որոշ ժամերին է յուզվում, այլ և կարող է նոյն տրամադրութիւնը առաջ բերել և ընթերցողի մէջ (էջ 15, 17). Նրա երգերը իսկապէս աղբիւր են տրամադրութիւնների և նրան իրաւամբ կարելի է տրամադրութեան երգիչ կոչել: Օրինակ՝

Աշո՜ւն է... անձրև... Շշուկներն անձև
Մեռնում են դանդաղ... պաղ միապաղաղ
Անձրև՜ ու անձև...

Սիրտս տանջում է ինչ որ անուրախ
Անհանգստութիւն...

Սպասիր, լսիր... ես չեմ կամենում
Անցած լոյսերից, անցած յոյզերից տառապել
Կրկին...

Նայի՜ր, ա՜խ, նայի՜ր՝ ցաւում է նորից
Իմ հիւանդ հոգին,
Անձրև՜ է... Աշուն... ինչո՞ւ ես յիշում,
Հեռացած ընկեր, մոռացած ընկեր,
Ինչո՞ւ ես յիշում...

Դժբաղդաբար այսպիսի գեղեցիկ կտորներ քիչ են նրա առաջին ժողովածուի մէջ:

Տէրեանի ոճը սահուն չէ, պատահում են երբեմն ինքնահնար, գուցէ և գաւառական բառեր, երբեմն տգեղ, ինչպէս «արցունքվել» «արձագանքվել», և երբեմն էլ տգեղ դարձուածքներ, մօդեռնիզմի անունով սրբագործված—քնքոյշ մութ, լոյս հնչիւններ, հեզ լոյս, կապուտաչեայ երազներ: Գործ է ածում և շատ էպիտետներ ռուս նորագոյն բանաստեղծ Վ. Բրիւսովի նման: Կան բանաստեղծութիւններ, որոնք սկզբից սահուն կերպով կարդացվում են, բայց վերջը ընկնում են կաղալ, երևի կամ անմշակ և կամ զգացմունքի պակաս լինելու պատճառով (էջ 11):

Առ այժմ շատ բան չէ կարելի ասել Տէրեանի բանաստեղծութիւնների մասին, որովհետև նրանք դեռ կեղևի մէջ են. երբ այդ կեղևը կը պատռվի, այն ժամանակ համն ու հոտը կիմացվի, հասուն կամ տհաս լինելը կը պարզվի:

Աւ. Տէր-Յարութիւնեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաց նամակ բժ. Ե. Մինասեանին

Leysin, 27/14 յուլիսի

«Մշակի» № 139-ում տպած ձեր յայտարարութիւնը ինձ շատ զարմացրեց, որովհետև այս գարնանը Թիֆլիսում ինձ հետ խօսակցելիս՝ դուք պատրաստականութիւն էիք յայտնել ձեր տրամադրութեան տակ եղած գումարները յանձնել «Կովկասում թոքախտի դէմ կռւող ընկերութեանը» յօգուտ Աբասթումանի սանատօրիայի: Արդեօք ինչ է պատահել այս մի քանի ամսում, որ դուք փոխել էք ձեր մտադրութիւնը և շտապում էք նուիրատուներին վերադարձնել իրանց փողերը, առանց նոյնիսկ հարցնելու նրանց կարծիքը: Ինձ թւում է, որ տեղը այնքան էլ մեծ նշանակութիւն չը պէտք է ունենայ այն մարդկանց համար, որոնք փայփայում են սանատօրիա ունենալու գաղափարը: Լաւ է ունենալ մի սանատօրիա Աբասթումանում, քան ոչ մէկը չունենալ: Վերջապէս Տրապիզոնը այնքան էլ հեռու չէ Աբասթումանից և Բաթումի միջոցով շատ հեշտ հաղորդակցութիւն կարելի է ստեղծել:

Հեռու լինելով հայրենիքից, ես դժբաղդաբար հնարաւորութիւն չունեմ միջամտելու այդ գործին, բայց ձեզ շատ կը խնդրեմ լրագրութեան միջոցով յայտարարել նուիրատուների ցուցակը և հարցնել, թէ որը նրանցից կուզենայ թողնել իր լուման Աբասթումանի սանատօրիայի օգտին:

Իշխ. Մ. Թումանեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Էնզելի, 20 յուլիսի

Երէկ Թեհրանից այստեղ հասաւ մէջլիսի անդամ յայտնի հռետոր Թաղի-զադէն իր եղբօր հետ:

Ուղիղ մի տարի առաջ նոյն Թաղի-զադէին այս կողմերում հազարաւոր, նոյնիսկ տասնեակ հազարաւոր հասարակութիւնը օվացիաներով դիմաւորեց, իսկ այսօր այդ նոյն պատգամաւորը շատ անշուք վերադարձաւ:

Թաղի-զադէի հետ իմ ունեցած առանձին տեսակցութեան միջոցին, որի ընթացքում խօսակցութեան առարկան գրեթէ միայն Պարսկաստանի դարդերն էին, նա միշտ խուսափողական պատասխաններ էր տալիս տուածս հարցերին և երևում էր շատ վհատված:

Իր ասելով նա երեք ամիս արձակուրդ էր ստացել մէջլիսից՝ կազդուրվելու համար, և այժմ Ռուսաստանի վրայով գնում է Թաւրիզ: Նա այսօր ճանապարհվեց Բագու:

Մուջահիդ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 յուլիսի

ՌԻԳԱ: Վինդավայի զինուորա-նահանգական դատարանի նստաշրջանը ձեռնարկեց քննելու այսպէս կոչված Ցրաունբուրգի յեղափոխութեան գործը: Մեղադրվում են 224, վկաներ կանչված են 645 հոգի, պաշտպանում են 15 փաստաբաններ:

ՄՈՍԿՎԱ: Մոսկվայի մօտ իր կալուածքում կողոպտվեց իշխանուհի Գրուզինսկայան: Կողոպտիչը, ներս մանելով սենեակը, գողացաւ պայուսակը փաստաթղթերով և պետական բանկի ստացականներով և թանգագին իրերով: Նկատելով իշխանուհուն, նա անհետևանք կրակեց և փախաւ:

ՊՈԼՏԱՎԱ: Պերէեասլավի գաւառում անցաւ ուրագան անձրևի ու կարկուտի հետ, որ փչացրեց բազմաթիւ ծառեր և շինութիւններ: Շրջվեցին մի քանի հողմաղացներ. ուրագանն սպանեց մի գիւղացու: Վնասները մօտ 50,000 րուբլու են:

ՕԴԵՍՍԱ: Եկաւ երկրագործութեան գլխաւոր կառավարիչը:

Ծովապետութեան և ռուսական նաւագնացութեան ընկերութեան 250 բանուորներ աշխատանքները դադարեցրին, ինկատի ունենալով որ տէրերն առաջարկեցին գիշերները աշխատել ցերեկվայ վարձով:

Երկօրեայ ընդմիջումից յետոյ վերստին երևան հանվեց ժանտախտի հիւանդութիւն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ֆինանսների մինիստրը թոյլատրեց արտասահմանից բերել տալ շաքարաւազ Պետերբուրգի նաւահանգստային մաքսատան միջոցով 300,000 պուդ, Ռիգայի վրայով՝ 50,000 պուդ, Լիբավայի վրայով՝ 50,000 պուդ:

ՏՎԷՐ: Նահանգական զէմստվոյին հիւանդանոցի բակում քննութեան ժամանակ հրդեհ ծագեց, որ ոչնչացրեց շինութիւնների մի մասը: Վնասը 150,000 րուբլու է. բացված է նախական քննութիւն:

ՈՒՖԱ: Մի քանի գիւղերում հրդեհները ոչնչացրին 300 տներ ստացուածքներով և անասուններով: Վնասը 150,000 րուբլի է:

ՏՐՈՄՍԷ: Պրինց Հէնրիխը յայտնում է, որ Հիւսիսային Բևեռը աէրօպլանով հետազօտելու հարցը դեռ վաղաժամ է, քանի որ նախ քննիչ արշաւախումբը դիտելու է հիւսիսային սառոյցները՝ համոզվելու համար 5—10—15 տարի յետոյ կարելի է մօտենալ Հիւսիսային Բևեռին աէրօպլանով:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳԱՐԵՋՐԻ ՄԱՍԻՆ

Խօլերայի սաստկանալը նորից հարց է բարձրացնում՝ թէ ինչ կարելի է խմել առանց խօլերայով վարակվելու:

Բժիշկները հաստատում են, որ ոգելից խմիչքների սաստիկ գործածութիւնը ստեղծում է յարմար միջավայր խօլերայով վարակվելու, բայց այդ տեսակ խմիչքների թւին չէ վերաբերում գարեջուրը, որովհետև նա պարունակում է իր մէջ 3°—4° ալկօհօլ. իսկ բժիշկների Համբուրգում խօլերայի ժամանակ արած դիտողութիւնների համաձայն, խօլերայով վարակման ամենափոքր $^0/_0$-ը տուին գարեջրի գործարաններում աշխատողները: Փորձերը ցոյց տուին, որ խօլերային վիբրիօնները սատկում են գարեջրի մէջ մի քանի ժամվայ ընթացքում («Вѣд. СПБ. Град.», 1908 г., № 216):

«Пет. Лист»-ը (№ 262, 1908 թ.) հաղորդում է, որ քաղաքային հիւանդանոցում «գարեջուր տալիս են կազդուրվող հիւանդներին իբրև առողջապահական ամենալաւ խմիչք»:

Առևտրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչների Պետական Դումային ներկայացրած զեկուցագրում ասված է. «Ոչ ամեն տեսակ խմիչքներ արբեցութեան պատճառ են դառնում և կործանիչ հետևանքներ տալիս: Կան այն տեսակ ոգելից խմիչքներ, նրանց թւում և գարեջուրը, որոնք չը պիտի հալածանքի ենթարկվեն»:

Զանազան երկիրների գարեջրի գործածութեան վերաբերեալ համեմատական աղիւսակը ցոյց է տալիս, որ Ռուսաստանում գարեջուրը մարդագլուխ գործ է ածվում միայն 3.8 լիտր, մինչդեռ Բելգիայում՝ 195,2 լիտր, Գերմանիայում՝ 106.7 լիտր:

Այստեղից պարզ է, որ գարեջրի բնական, չափաւոր գործածումն խօլերայի ժամանակ վնասակար չէ: ՈՒՍՏԻ ՄԻՔ ՎԱԽԵՆԱՔ ԳԱՐԵՋՈՒՐ ԽՄԵԼՈՒՑ:

865. 1—1

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինւորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ:
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տէլէֆօն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը $9^1/_2$-ից մինչև 5-ը ցերեկվայ:

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.:
ՌՈՒԿԼԱԴՆԻԿՕՎ Ի. Օ.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.:
ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.:
ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.:
ԽԱՏԻՍՕՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշ. օրերից:
ԽՈՒԴԱԲԱՇԵՎ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.:
ՍԱՐԱՊ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ.:
ՏԷՏՐԱՋԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.:
ԱՍՊԻՍՕՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2 ը ցեր.:
ԿԻՆ ԲԺ. ԻՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.,
ՎԵՍԵԼՕՎԶՕՐՕՎ Ն. Ն.—Խիրուրգ. հիւ.: ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժամը 2—3-ը:
ԶՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլէքտրոթէրապիա., ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 4—5-ը:
ՄԿՐՏՈՒՄԵԱՆ.—սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ $10^1/_2$—11 ժ. առ.:
ՊՕՆԴՕԵՎ—ջղային հիւ. և էլէքտրոթէրապիա. ամեն օր, ժամը 2—3-ը:

Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստում, անալիզ, հիպնոզ, ստնտուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով: Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի:

(կ.) 356. 100—44

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—$12^1/_2$—$1^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^1/_2$—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—$6^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—79

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՈՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչև սեպտեմբեր: Верхній бульваръ, д. кв. Гирей.
(ե. հ. կ.) 565. 0—30

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին և վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1.
(երեկոյեան ժ. 5—7.
Արսս-Արադսկայա, տուն Միրիմանովի:
(ե. հ. կ.) 725. 100—19

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԻՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող № 8
(օ. մ.) 564. 100—29

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոսկվայում երկար ժամանակ գործունէութիւն ունեցած
—⊕ ՄԻ ՀԱՅ ⊕—
որը ընտանեկան հանգամանքներից ստիպված այժմ կամենում է ապրել Կովկասում, մասնագէտ մանուֆակտուրային և բամբակի գործերում, ծանօթ բանկային բոլոր գործողութիւններին և այլն, խնդրում է համապատասխան ծառայութիւն, չափաւոր ռոճիկով: Համաձայն է ուրիշ քաղաքներ գնալու:
Հասցէն՝ Գօլօվինսկի պրօսպ., եղբ. Շիկանեանցների խանութ:
(կ.) 863. 3—1

ТОРГ. ДОМЪ
Х. ФИНКЕЛЬ-ШТЕЙНЪ
БЕРЛИНЪ

ԼՈՒՐՋ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ!!!
Կարդացէք ուշադրութեամբ!!!
Մեր ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԸ ամենքին յայտնի են իրանց կատարելագործ. կօնստրուկցիայով և հիանալի պարզ ձայնաւորութեամբ: Վերացված է ամեն տեսակ ճչոց: Ունկնդրելով մեր ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻՆ, դուք հաւատացած կը լինէք, որ արտիստն ինքն է ձեր աչքի առաջ: Մեր գրամմօֆօնները Ռուսաստանում տարածելու համար, մենք նշանակել ենք հանրամատչելի գին. 1) Գրամմօֆօն «ՏԻՒՊԻՕՆ» 10 հատ պլաստինկաներով և 1000 հատ կօնկտաասեղներով՝ իբրև ձրի յաւելուած—14 ր. 25 կ.: 2) Գրամմօֆօն «ՍՏԱՆԴԱՐՏ» ամենալաւ մեխանիզմով և չեն ծալվող ռօնդարով. կօրպուսը միանգամայն շքեղ, ընկոյզե փայտից, քանդակներով, չափը 30×30×16, և ձրի յաւելուած՝ 12 մեծ պլաստինկա ռուսական և 2000 ասեղ—միայն 25 րուբլով: Պատուէրներն ուղարկվում են Վ. ՊԵՏԻՐ ՎՃ., ԱՌԱՆՑ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ: Մաքսը և փաթեթը մեր հաշւին: Ճանապարհածախսը հաշվվում է միայն 2 ռուբ. 50 կոպ., Սիբիր՝ 3 ռուբ. 50 կոպ., Արևել. Սիբիր՝ 4 ռուբ. 50 կոպ.: Մեր գրամմօֆօնները մի լարումով նուագում են 2 մեծ պլաստինկաներ: Լարվում են կողքից, նոյնիսկ նուագելու ժամանակ: Իւրաքանչիւր մեր գրամմօֆօնը կարելի է փոխել «Պատէֆօնի»: Պատէֆօնն ուղարկվում է 5 ր. 50 կոպէկով: Հասցէն որը կարելի է կտրել և կպցնել ծրարի երեսին.
[illegible]
Германія. БЕРЛИНЪ, Торг. Домъ Х. Финкельштейнъ. Кантъ ул., 120.
BERLIN—Sch H. Finkelstein. Kantstr. 120.
Կատալօգները ուղարկում ենք ձրի: Թղթակցութիւնները ռուսերէն:
(16.25) (B.44518) 2—2

8000
ՊԱՏԿԵՐ ՁՐԻ
մենք բաժանում ենք այս լրագրի ընթերցողներին՝ մեր նախաձեռնութիւնը աջող տարածելու նպատակով: Ուղարկեցէք մեզ ձեր լուսանկարը (հին կամ նոր, մենակ, երկու հոգով կամ խմբով նկարված) ձեր ճիշդ հասցէով մանրամասն լուսանկարի հակառակ կողմի վրա, և դուք շուտով կը ստանաք միանգամայն նման 36 սանտ. լայնութեան և 46 սանտ. բարձրութեան ձեր ՄԵԾԱՑՐԱԾ ՊԱՏԿԵՐԸ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՁՐԻ: Միակ ծառայութիւնը, որ փոխարինաբար մենք կը խնդրենք ձեզանից, այդ այն է, որ ձեր պատկերը ստանալուն պէս մեր ֆիրման յանձնարարէք ձեր բարեկամներին և ծանօթներին շրջանում: Ձեր լուսանկարը կը վերադարձվի ձեզ անխախտ դրութեան մէջ: Ճանապարհածախսի, ծրարելու և այլ ծախսերի համար խնդրում ենք ուղարկել 75 կոպ. մարկաներով, կամ թէ վճարովի ճարով 95 կոպ.:
Общество „СЕМИ-ЭМАЛЬ“, Лодзь, № 52.
(B. 48840) 846. 1—1

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ
ճեմարանաւարտ և գիմնազիաւարտ
փնտռում են
← ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆ →
Ունեն մի քանի տարվայ փորձառութիւն: Առաւելութիւն է տրվում պարսկահայ գաղթօջախներին: Հասցէն՝ Эривань, Каравансарайская ул., № 32. (կ.կ.) 864. 2—1

Վեհափառ Կաթողիկոսը
Սևանի վանքում
18 գոյնով մեծադիր պատկեր
ԳԻՆԸ 3 Ր.
—● ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ ●—
միևնոյն հասցէով ստացող բաժանորդներին ձրի:
Դիմել՝ Тифлисъ. Бюро Печати, Мадатовская, 5.
(ե. կ.) 811. 0—5

Dr. Obermeyer's
Herba Seife

ՉԸ ԿԱՅ լաւագոյն միջոց բացի բժշկական խոշոր հեղինակաւոր անձերի կողմից յայտարարված անփոխարինելի և ԲՈՒՍԱԿԱՆ
ՍԱՊՈՆ „ԳԵՐԲԱ“
ԴՈԿՏ. ՕԲԵՐՄԷՅԵՐԻ
պեպենի, չոր եւ թաց եռսի, բշտիկների, պզուկների, եռը, քիփի եւ մորթու անմաքրութեան դեմ:
✽ ՀԱԶԱՐԱՒՈՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ!! ✽
Կարճատև գործածութիւնից յետոյ—լաւ աջողութիւն:
Ծախում են դեղատներր եւ դեղագործ. խանութներր՝ փոքր կտորր 60 կոպէկով, իսկ մեծ կտորր 80 կոպ.:
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Իսկականը միայն «ԳԹՈՒԹԵԱՆ ՔՈՅՐ» նկարով իւրաքանչիւր կտորի վրա:
Գլխաւոր ներկայացուցիչ ամբողջ Ռուսաստանի համար՝ Д. РОЗЕНТАЛЬ, ВАРШАВА
(5,15,25) (B.39510) 665. 18—6



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ! ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ! ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ!
Լաւէ իւրաքանչիւր, ով բերել կը տայ սարքն յիշված զարնիտուրը՝ բաղկացած 18 ԱՐԺԷՔ., ՕԳՏԱԿԷՏ ԵՒ ՀԱՐ-ՀԱՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ—մինչև օրս չեղած գնով — ՄԻԱՅՆ 4 Ր. 85 Կ. (փոխ. 15 ր.)
1) ՏՂԱՄ. ԳՐՊ. ԳԵՂ. ԲԱՑ ԺԱՄԱՑ. անգլ. իսկական սև պողպատից, ամուր շինուածք, անկէր (ոչ ցիլինդր), ընթացքը քարերով, չը սեղմվող զսպանակով, փաչուց զերծ պահող ապակիով, ձայնաւոր և մինչև րոպէները ստուգված ընթացքով:
2) ԷԼԵԳԱՆՏ ՇՂԹԱՅ իսկական նիկէլից, երկար կամ կարճ.
3) ԲՐԵԼՕԿ նոյն մետաղից:
4) ԺԱՄԱՑ. ԳՈՂԱՑՎԵԼՈՒՑ ՊԱՀՊԱՆՈՂ ԻՐ:
5) ԻՍԿԱԿԱՆ ոսկուց՝ 56 յարգի՝ մատանի (տես նկարը) արհեստական կեղծ ադամանդով:
6) ԱՄԵՐԻԿ. ՊԱՏԵՆՏ. ԱՆՎՆԱՍ ԱԾԵԼԻ «Ժիլեդէն» (տես նկարը), որով իւրաքանչիւր, նոյնիսկ մթութեան ժամանակ, կարող է ինքն իրան ածիլել:
7) ՆԻԿԷԼԵԱՑ ԹԱՍ:
8) ՆԻԿԷԼԵԱՑ ՎՐՁԻՆ:
9) ԿԱՇՈՒԻ ՊՈՐՏՄՕՆԷ փողի համար, 6 բաժ. (առ. բաժ.՝ ոսկու համար), արտասահման. իսկ. կակուղ կաշուց և մեխանիկ. փականով՝ պարունակելով իր մէջ գաղտնի տեղ կնիքի համար:
10) ԿԱՈՒՉՈՒԿԷ ԿՆԻՔ պատուիրողի անուն-ազգանունով:
11) ՄԻ ՍՐՈՒԱԿ ԹԱՆԱՔ կնիքի համար:
12) ՆՈՐՈՒԹԻՒՆ: Տնային պատենտ տպարան, որ պարունակում է մօտ 200 տառ, թւանշ. և կէտադր. նշ., տպելու համար այցետոմսեր, բլանկներ, ծրարներ և այլն:
13) ՏՈՒՌԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՆԵԼԻՔ:
14) ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ:
15) ԲԱՐՁ ՏԵՍԱԿ. ՄԵՏԱՔՍ ՄՈՒՐՐԻ ՀԱՄԱՐ:
16—18) ՏՈՒԱԼԵՏԱՅԻՆ ՃԵՐԵՂ ՆԵՍՍԷՍԷՐ, շուրջը սադրի կաշուց, պարունակելով իր մէջ յղկված հայելի, սանր ու պլիրօր՝ ատամներն ու ականջները մաքրելու համար:
Այդ բոլորը միասին՝ փոխ. 15 ր. միայն 4 ր. 85 կ.: Կանացի բաց ժամաց. 17 յաւելուածներով 5 ր. 35 կ.: Տղամ. և կան. փակ. (խուլ) ժամաց. (ցիլ.) 17 յաւել. 5 ր. 85 կ.: Ուղարկ. ենք շուտափոյթ, պատուէրն ստանալուն պէս, երաշխաւորելով ճիշդ ընթացքի համար 6 տարով, առանց կանխավճարի: Ճանապարհածախսը 50 կ., Սիբիր և Միջին-Ասիա 90 կ.: Պատուէրները խնդրում ենք հասցէագրել.
Въ „БАЗАРЪ НОВОСТЕЙ“, Варшава, Граничная № 5—127.
Р. S. Խնդրում ենք կատարել շուտ ընծայել, քանի որ ուղարկում ենք լաւ յանձ. ապրանք, որի համար և ստանում ենք բազմաթիւ շնորհակալ. և գովաս. նամակներ:
Թղթակցութիւններ ունենք:
(5,25,15,6,25) (B. 32349) 500. 5—5

Типографія „Экономія“ Большая Банкская № 3.